




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1853

ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Ե Գրականությունը բոլոր յերկիրների, միացե՛ք.

ԳԼԱՎԼԻՏ № \_\_\_\_\_

Վ. Ի. Լ Ե Ն Ի Ն

193 թ.

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ  
Մ Ա Ս Ի Ն

ՍՅՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

3K23

7-32

30 MAY 2005

Պրոկտորները բոլոր յերկիրներին, միացե՛ք.

54 NOV 2008

3K23

7-32

սյ.

Վ. Ի. Լ. Ե. Ն. Ի. Ն.

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԿՈՒՍԶՐԱՏ

1932

ՅԵՐԵՎԱՆ

11 SEP 2013

7853



4738  
39

## ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ներկայումս պարենհարկի հարցն առանձնապես շատ ուշադրություն և դրավում և կշռադատություններ ու վեճեր առաջ բերում։ Լիովին հասկանալի չէ, վորովհետև այս հարցը տվյալ պայմաններում քաղաքականության գլխավոր հարցերից մեկն և իրոք։

Հարցի քննությունը մի քիչ խառնաշփոթ բնույթ և կրում։ Չափազանց հասկանալի պատճառներով բոլորս ել տառապում ենք այս թերությունից։ Հենց այս պատճառով ել ավելի ոգտակար կլինի այս հարցին վոչ թե «որվա չարիքի» տեսակետից, այլ ընդհանուր սկզբունքային կողմից մոտենալու վորձը։ Ուրիշ խոսքով՝ հայացք դրել այն նկարի ընդհանուր, հիմնական ֆոնի վրա, վրոտեղ տվյալ որվա քաղաքականության վորոչ գործնական ձեռնարկումների նախընտրելի ենք գծում։

Այսպիսի մի վորձ անելու համար թույլ եմ տալիս մի յերկար հատված մեջ բերել իմ այն բրոշյուրից, վոր կրում և «Մեր որերի գլխավոր խնդիրը։— Չափ «յերեսայության» և մանր-բուրժուականության մասին» գլխադիրը։ Այս բրոշյուրը լույս ե' տեսել 1918 թ. Պետրոգրադի Պատգամավորների խորհրդի, հրատարակության և տարածակում և նախ 1918 թ. մարտի 11-ին Բրեստի հաշտության առթիվ դրած մի լրագրական հոդված և յերկրորդ՝ 1918 թ. մայիսի 5-ին թվագրած մի բանակով ձախ կոմունիստների այն ժամանակվա մի խմբի դեմ\*)։ Բանակովին այժմ հարկավոր չէ, և այն յես դուրս եմ դրում։ Թողնում եմ այն, ինչ վերաբերում

\*) Տես Յերկերի XXII հատոր, էջ 503—528 ոտու. հրատ. Խմբ.։

է «Պետական կապիտալիզմի» և կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցում կատարող մեր ժամանակակից տնտեսութեան հիմնական տարրերի վերաբերյալ դատողութիւններին:

Ահա թե ինչ էլի վերում յետ այն ժամանակ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՈՂՈՄԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

1918 թ. ԲՐՈՇՅՈՒՐԻՑ

«...Մեր Խորհրդային Հանրապետութեան մեջ տիրող՝ գործերի ներկա դրութեան հետ համեմատած, պետական կապիտալիզմը կլինէր մի քայլ դեպի առաջ: Յետեւ, որինպէ, կես տարուց հետո մեզանում պետական կապիտալիզմ հաստատուելը, ապա վիթխարի առաջադիմութիւն կլինէր այս, այլև ամենավստահելի յերաշխիք այն բանի, վոր մի տարուց հետո մեզանում վերջնականապէս կամրապնդվի և անպարտելի կդառնա սոցիալիզմը:

Յես յերեակայում եմ, թե այս խոսքերից ինչպիսի աղետիվ դայրութիւմ հետու կիտալիզմն վումանք... Ի՞նչպէս: Խորհրդային սոցիալիստական Հանրապետութեան մեջ պետական կապիտալիզմին անցնելը մի քայլ առաջադիմութիւն կլինէր... Միթե սոցիալիզմին դավանանքը չե՞ր այս»:

«... Հենց այս կետի վրա պետք է ավելի մանրամասն կանգ առնել:

Նախ՝ պետք է պարզել, թե վորն է հենց այն անցումը կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, վորը մեզ իրավունք ու հիմք է տալիս Խորհրդային սոցիալիստական Հանրապետութիւն կոչվելու:

Յերկրորդ՝ պետք է մերկացնել այն մարդկանց սխալները, վորոնք չեն տեսնում, թե մեզանում սոցիալիզմի գլխավոր թշնամին մանր-բուրժուական տնտեսական սլայմաններն են ու մանր-բուրժուական տարրերը:

Յերրորդ՝ հարկավոր է լավ ըմբռնել Խորհրդային պետութեան նշանակութիւնն իր տնտեսական տարբերութեամբ բուրժուական պետութիւնից:

Քննենք այս բոլոր յերեք հանդամանքները:

Թվում է, թե դեռևս չի յեղել մի այնպիսի մարդ, վոր Ռուսաստանի տնտեսական հարցը քննելիս ժխտեր այս տնտեսութեան անցումային բնույթը: Թվում է, թե վր'չ մի կոմունիստ չի ժխտել նաև այն, վոր «Սոցիալիստական խորհրդային Հանրապետութիւն» արտահայտութիւնը ցույց է տալիս Խորհրդային իշխանութեան վճռականութիւնը՝ դեպի սոցիալիզմ տեղի ունենալիք անցումն իրադրոճելու, և վոր յերեք խոստովանութիւնն այն մասին, թե տվյալ տնտեսական կարգերը սոցիալիստական են:

Իսկ ի՞նչ է նշանակում «անցում» բառը: Արդե՞րք եկոնոմիկայի վերաբերմամբ կիրառելիս այս բառը ցույց չի տալիս, վոր տվյալ հասարակարգում քե՛ր կապիտալիզմի, քե՛ր սոցիալիզմի տարրեր, մասնիկներ ու կտորներ կան: Ամեն վորը ընդունում է, վոր այո՛: Բայց այս բանը խոստովանող ամեն մարդ չի խորհրդածում այն մասին, թե հապա վորո՞նք են հենց այն տարրերը զանազան հասարակական-տնտեսական կառուցքների, վորոնք ներկայումս գոյութիւն ունեն Ռուսաստանում: Հարցի մեխը հենց այստեղ է թաղնված:

Թվենք այս տարրերը.

1) նահապետական, այսինքն զգալի չափով նատուրալ, գյուղացիական տնտեսութիւնը.

2) մանր ապրանքային արտադրութիւնը (այս շարքին է պատկանում հացահատիկ վաճառող գյուղացիների մեծամասնութիւնը).

3) մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմը.

4) պետական կապիտալիզմը.

5) սոցիալիզմը:

Ռուսաստանն այնքան մեծ ու խալտաբեւեռ է, վոր հասարակական-տնտեսական կառուցքի այս բոլոր տարրեր տիրապետել խաչաձև հյուսվում են նրա մեջ: Այս հանդամանքն է դրութեան առանձնահատկութիւնը:

Հարց և ծաղում, թե հասկա մո՞ր տարրերն են գերա-  
կշռում: Պարզ բան է, վոր մանր-գյուղացիական յերկրում  
մանր-բուրժուական տարերքն է գերակշռում և չի յեւ կարող  
չգերակշռել: Հողագործների մեծամասնութիւնը և այն եւ  
վիթխարի մեծամասնութիւնը մանր-ապրանքային արտա-  
դրողներ են: Մեղանում պետական կապիտալիզմի (հացա-  
հատիկի մենաշնորհը, վերահսկողութեան յենթակա ձեռնար-  
կուներ ու առևտրականներ, բուրժուական կոոպերատոր-  
ներ) կեղևը պատռում են մերթ այստեղ ու մերթ այնտեղ  
սպեկուլյանտները, և սպեկուլյացիայի գլխավոր առարկան  
հացն է:

Գլխավոր կռիւլը ծավալւում է հենց այս ասպարեղում:  
Ո՞ւմ և ո՞ւմ միջև է տեղի ունենում այս կռիւլը, յեթե խո-  
տենք տնտեսական կատեգորիաների տերմիններով, ինչպիսին  
է «պետական կապիտալիզմը»: Արդո՞ք այս բոպելին թվածս  
կարգով չորրորդ ու հինգերորդ աստիճանների՞ միջև: Իհար-  
կէ, վոչ: Այստեղ սոցիալիզմի դեմ կռիւում է վո՛չ թե պետա-  
կան կապիտալիզմը, այլ մանր բուրժուազիան, դումարած  
մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմը, միասին, միա-  
համուռ թե՛ պետական կապիտալիզմի ու թե՛ սոցիալիզմի  
դեմ: Մանր բուրժուազիան հակառակ է կանգնում ամեն տե-  
սակ պետական, ինչպես պետական կապիտալիստական, այն-  
պես և պետական-սոցիալիստական, միջամտութեանը, հաշ-  
վառմանն ու վերահսկողութեանը: Իրականութեան միանգա-  
մայն անառարկելի փաստն է այս, վորը չըմբռնելու մեջ է  
թաղված մի շարք տնտեսական սխալների արմատը: Սպե-  
կուլյանտը, առևտրի կողոպտիչը, մենաշնորհը վիթեցնողը—  
ահա մեր գլխավոր «ներքին» թշնամին, խորհրդային իշխա-  
նութեան տնտեսական ձեռնարկումների թշնամին: Յեթե 125  
տարի առաջ Ֆրանսական մանր բուրժուաներին, ամենապայ-  
ծառ ու ամենաանկեղծ հեղափոխականներին դեռևս ներելի  
յեր առանձին, սակավաթիվ «քնտրյալներին» պատժելով ու

գեկլարացիաների վորոտներով սպեկուլյանտին հաղթելու  
ձգտումը, ասլա այժմ այս կամ այն ձախ ես-երի հարցին  
դուռ ֆրանսական վերաբերմունք ցույց տալը յուրաքանչյուր  
գիտակից հեղափոխականի մեջ զգվանք ու նողկանք է հարու-  
ցանում: Մենք լավ գիտենք, վոր սպեկուլյացիայի տնտեսա-  
կան հիմքը մանր-սեփականատիրական, Ռուսիայում արտա-  
սովոր լայն ծավալ ունեցող խալն է, այլև մասնավոր-տնտե-  
սատիրական կապիտալիզմը, վոր հանձին յուրաքանչյուր  
մանր բուրժուայի իր դործակալն ունի: Մենք գիտենք, վոր  
այս մանր-բուրժուական հիգրայի միլիոնավոր շոշափուկնե-  
րը մերթ այստեղ, մերթ այնտեղ ընդգրկում են բանվորո-  
թեան առանձին փոքրիկ խավերը, գիտենք, վոր պետակա-  
մենաշնորհի փոխարեն սպեկուլյացիան ներս է խուժում մեր  
հասարակական տնտեսական կյանքի բոլոր արանքները:

Ով այս չի նկատում, նա հենց իր կուրուքյամբ յեղևան  
է հանում, վոր մանր-բուրժուական նախապաշարումներին  
գերի յե մնացել...»:

«...Մանր բուրժուական փողերի պաշար ունի, միջանի  
հաղար ուրբի, վոր պատերազմի ընթացքում նա կուտակել է  
«արդարութեամբ» ու մասնավանդ ստուքյամբ: Ահա այս է  
այն տնտեսական տիպը, վորը բնորոշ է, իրրե սպեկուլյա-  
ցիայի ու մասնավոր-սեփականատիրական կապիտալիզմի  
հիմք: Փողը մի վկայական է հասարակական հարստութեան  
նից բաժին ստանալու համար, և մանր սեփականատերերի  
այս բաղմամիլիոն խալն տոմար բռնած պահելով այս վկայա-  
կանը, այն թաղցնում է «պետութեանից», վո՛չ մի սոցիալիզ-  
մի ու վո՛չ մի կոմունիզմի հհալատալով և պրոլետարական  
փոթորից «հեռու պղպելով»: Կամ մենք այս մանր բուր-  
ժուային մեր վերահսկողութեանը և հաշվառամանը կենթար-  
կենք (իսկ այս կարող ենք անել, յեթե կադմաիերպենք չքա-  
վորութեանը, այսինքն՝ բնակչութեան մեծամասնութեանը  
կամ կիսապրոլետարներին պրոլետարական գիտակից ամպն-

դարձի շուրջը) և կամ նա մեր բանվորական իշխանությունն անխուսափելի ու անսխալ կերպով կտապալի, ինչպես տապալեցին հեղափոխությունը Նապոլեոններն ու Կալինյանները, վորոնք աճել ու զորացել էին հենց այս մանր-բուրժուական հողի վրա: Այսպես և զրված հարցը: Միայն այսպես և զրված հարցը...:

«... Հաղարները պահող, թագնող մանր բուրժուան պետական կապիտալիզմի թշնամին և, և այս հաղարները նա ցանկանում և իրացնել անսխալ իր համար, չքավորների հակառակ, ընդհանուր պետական աճեն տեսակ վերահսկողություն հակառակ, իսկ այս հաղարների ընդհանուր գումարը բաղմամբ իրարդ հիմք և պարզեում սովետականացիային, վորը վիժեցնում և մեր սոցիալիստական շինարարությունը: Յենթադրենք, վոր վորոչ քանակություն բանվորներ վորոչ ժամանակամիջոցում տալիս են արժեքների մի գումար, վոր արտահայտվում և 1-000 թվանշանով: Այնուհետև յենթադրենք, վոր մեղանում այս գումարից 200-ը կիրքի մանր սովետականացիային, աճեն տեսակի համարակություն և խորհրդային ղեկընդունելի ու խորհրդային կարգադրությունների մանր-բուրժուական դանդաղման շնորհիվ: Յուրաքանչյուր ղեկակցի բանվոր կասի. յենթե յես կարողանայի այս հաղարից 300-ը տալ՝ ավելի կարգ ու կաղմակերպություն ստեղծելու գնով, հոգարություն յերկու հարյուրի վոխարեն յերեք հարյուր կտայի, վորովհետև խորհրդային իշխանության ժամանակ այս «տուրքը», յենթադրենք, մինչև հարյուրի կամ հիսուների իջեցնելը հետո բուրժուական հետ զործ կլինի, յերբ կարգն ու կաղմակերպությունը կանոնավորված կլինի, յերբ աճեն տեսակ պետական մեղանորհի մանր-սովետականատիրական վիժեցումը վերջնականապես հաղթահարվի:

Այս հասարակ թվական որինակով, վորին դիտմամբ վերին աստիճանի սլարդ քնույթ ենք տվել՝ շարադրությունը

ժառանգելի դարձնելու համար, սլարդվում և պետական կապիտալիզմի ու սոցիալիզմի ալթմյան դրություն հարաբերակցությունը: Բանվորների ձեռքում և պետական իշխանությունը, նրանք իրավական լիակատար հնարավորություն ունեն «առնելու» ամբողջ հաղարը, այսինքն վոչ մի կոպեկ չտալու այն դեպքում, յերբ սոցիալիստական նպատակով գործադրությունը բացակայում և: Այս իրավական հնարավորությունը, վոր փաստապես իշխանությունը բանվորների ձեռքն անցնելու վրա յես հենվում, սոցիալիզմի մի տարրն և, Բայց մանր- սովետականատիրական ու մասնավոր կապիտալիստական տարերքները բաղմամբ ձեռնադարձներով խախտում են այս իրավական դրությունը, ծավալում են սովետականացիան, վիժեցնում են խորհրդային ղեկընդունելի իրադրությունը: Պետական կապիտալիզմը մի վիթխարի քայլ կլինի դեպի առաջ, յերբ նույնիսկ մենք (յես դիտմամբ վերցրի թվական այսպիսի որինակ, վորպեսզի ավելի ցայտուն ցույց տա մյս) վճարենք ավելի շատ, քան հիմա, վորովհետև «դիտություն» համար արժե վճարել, վորովհետև այս ոգտակար և բանվորներին, վորովհետև ամենից կարևորը անկարգության, քայքայման, թափթիվածության հաղթահարումն և, վորովհետև մանր-սովետականատիրական անիշխանության շարունակվելն ամենամեծ, ամենից ահարկու վտանգն և, վոր մեզ ռեպայման դեպի կորուստ կտանի (յենթե մենք նրան չհաղթենք), այսինքն պետական կապիտալիզմին մեծ տուրք տալը վո՛չ միայն մեզ դեպի կորուստ չի տանի, այլ ամենաճիշտ ձևապարհով մեզ կհասցնի սոցիալիզմին: Բանվոր դասակարգը, վոր սովորած կլինի, թե ինչպես պետք և պաշտպանել պետական կարգն անիշխանության դեմ, վոր սովորած կլինի, թե ինչպես պետք և պետական կապիտալիստական սկզբունքներով կարգի դնել արտադրության խոշոր, համարակալական կաղմակերպությունը, իր ձեռքում կունենա— ներեցնք արտահայտությունս— բուր իրադրությունը, և սոցիալիզմի ամբապնդումն ապահովված կլինի:

Պետական կապիտալիզմը տնտեսապես անհամեմատ զիջի բարձր է, քան մեր այժմյան եկոնոմիկան. այս — առաջին:

Յերկրորդ՝ նրա մեջ վր'չ մի սարսափելի բան չկա ճորհրդային իշխանության համար, վորովհետեւ խորհրդային պետությունը մի պետություն է, վորի մեջ բանվորների ու չքավորության իշխանությունն ապահովված է»:

«... Հարցն է՛լ ավելի պարզելու համար ամենից առաջ բերենք պետական կապիտալիզմի ամենակոնկրետ յորինակը: Խորին հայտնի չէ, թե վորն է այն յորինակը. Գերմանիան է: Այստեղ տեսնում ենք «վերջին խոսքը» ժամանակակից խոշոր կապիտալիստական տեխնիկայի ու պլանաչափ կազմակերպության, վոր յենքարկվում է յունկերա-բուրժուական խմբերի ավիզմին: Դեն գցեցե՛ք ընդդժաժս բռները, զինվորական, յունկերական, բուրժուական, խմբերի աստական պետության տեղ գրեք նույնպես մի պետություն, միայն այլ սոցիալական տիպի, այլ դասակարգային բովանդակություն ունեցող պետություն, խորհրդային, այսինքն պրոլետարական պետություն, և դուք կտանաք պայմանների տյեղ ամբողջ գումարը, վոր տալիս է սոցիալիզմը:

Սոցիալիզմն աներևակայելի չէ առանց նորագույն դիտության վերջին խոսքի համաձայն կառուցված խոշոր կապիտալիստական տեխնիկայի, առանց պլանաչափ պետական կազմակերպության, վոր տոտյակ միլիոնավոր մարդկանց յենթարկում է արդյունքների արտադրության ու բաշխման դործում միասնական նորման ամենախիստ կերպով պահպանելուն: Այս մասին մենք, մաքուր փոփոխությամբ, միշտ ասել ենք, և այն մարդկանց հետ, վորոնք նույնիսկ այս բանը չեն հասկացել (անարխիստներ, ձախ ես-երների առնափառ կես մասը) յերկու վայրկյան ել չարժի կորցնել խոսելու համար:

Միաժամանակ՝ սոցիալիզմն աներևակայելի չէ առանց պրոլետարիատի տիրապետության պետության մեջ. այս

նույնպես այրուքն է: Պատմությունը (վորից վոչ վոք, բացի դուցե մենչեիկ առաջնակարգ բխադրականներից, չէր սպասում, վոր նա հարթ, հանդարտ, հեշտ ու պարզ կերպով «ամբողջական» սոցիալիզմ տար) այնպես յուրահատուկ յեղանակով ընթացավ, վոր 1918 թ. մոտերքը ծնեց սոցիալիզմի իրարից անջատ յերկու կեսերը, կողք-կողքի, ինչպես յերկու ապագա ճռուտեր, միջադեպին խմբերի ավիզմի մի կեղևի տակ: Գերմանիան ու Ռուսաստանը 1918 թ. իրենց մեջ ամենից ավելի ակներև մարմնացնում էին մի կողմից սոցիալիզմի տնտեսական, արտադրական, հասարակական-տնտեսական պայմանների նյութական իրականացումը և մյուս կողմից՝ սոցիալիզմի քաղաքական պայմանների իրականացումը:

Պրոլետարական հաղթական հեղափոխությունը Գերմանիայում միանգամից, շատ մեծ հեշտությամբ կշախմախեր խմբերի ավիզմի ամեն տեսակ կեղև (վորը, դժբախտաբար, շատ լավ պողպատից է չինված և այս պատճառով ել ամեն մի... ճռուտի ջանքերով չի կոտրվում), կիրականացնելու համախարհային սոցիալիզմի հաղթանակն անշուշտ, առանց դժվարությունների կամ չնչին դժվարություններով, — իհարկե, յեթե «դժվարի» մատչաբար վերցնենք համախարհային-պատմական և վոչ թե քաղքենու նեղ խմբակային չափերով:

Յեթե հեղափոխությունը Գերմանիայում դեռ դանդաղում է «բռնկվել», ապա մեզ մի խնդիր է մնում — սովորել գերմանացիների պետական կապիտալիզմը, բոլոր ուժերով ընդորինակել այն, չինայել վո՛չ մի դիկտատորական միջոց այն բանի համար, վոր բարբարոսական Ռուսիայի արևմտահանության ընդորինակումն ուրազ ընթանա, և այս նպատակով բարբարոսության դեմ կովելու համար կանգ չառնել վո՛չ մի բարբարոսական միջոցի առաջ: Յեթե անարխիստներն ու ձախ ես-երներն մեջ կան մարդիկ (յես հանկարծակի

հիշեցի Կարենինի ու Գեյի ճառերը Կենտրո. Գործ. Կոմիտե-  
յում), վստահ ընդունակ են Նարեկի նման դատելու, վոր  
հոր թե մեղ, հեղափոխականներին, վայել չեն գերմանական  
իմպերիալիզմից «չափ առնել», ասլա պետք է մի բան ասել.  
անհուսալիորեն (ու լիովին իրավացի կերպով) կորած կլի-  
ներ այն հեղափոխությունը, վոր այդպիսի մարդկանց լրջո-  
րեն բանի տեղ կդնեն:

Ներկայումս Ռուսաստանում գերակշռում է հենց մանր-  
բուրժուական կապիտալիզմը, վորից թե դեպի խոշոր պետա-  
կան կապիտալիզմը և թե՛ սոցիալիզմը միևնույն ֆակտորին  
է տանում, ստանում է այն ուղին, վոր անցնում է միջանկյալ  
միենունյն կայարանով, մի կայարան, վոր կոչվում է «ար-  
դյունքների արտադրության և բաշխման համաժողովրդա-  
կան հաշվառում ու վերահսկողություն»: Ով այս չի հա-  
կանում, անտեսական ամենաանտանելի սխալն է գործում,  
կամ իրականության փաստերը չիմանալով, յեղածը չտեսնե-  
լով, ճշմարտության յերեսին նայել չկարողանալով, կամ սահ-  
մանափակվելով «կապիտալիզմի» ու «սոցիալիզմի» վերա-  
ցական հակադրությամբ և խոր չըմբռնելով այս բոլորին  
մեղանում կատարվող այդ անցման կոնկրետ ձևերն ու աս-  
տիճանը:

Փակագծի մեջ ասենք, վոր այս հենց այն թեորիական  
սխալն է, վոր մոլորեցրեց «Новая Жизнь»-ի ու «Вперед»-ի  
բանակի ամենալավ մարդկանց. սրանցից վատթարներն ու  
միջակները բթամտության ու բնավորության չունենալու  
պատճառով բուրժուազիայից սարսափած՝ նրա պոչից են  
ընթանում. լավագույնները — չհասկացան, վոր սոցիալիզմի  
ուսուցիչները դատարկ տեղը չեյին խոսում կապիտալիզմից  
դեպի սոցիալիզմ անցնելու մի ամբողջ ժամանակաշրջանի  
մասին, և իդուր չեք, վոր նրանք ընդդոմ էյին նոր հասա-  
րակության «յերկունքի յերկար ցավերը», և պետք է այն  
եղ ասել, վոր այս նոր հասարակությունը դարձյալ մի արս-

տրակցիա չէ, վորը կյանքում այլ կերպ չի կարող մարմնա-  
նալ, բայց յեթե այս կամ այն սոցիալիստական պետություն  
ստեղծելու թաղմաղան, անկատար ու կոնկրետ վորձերի մի-  
ջոցով:

Հենց այն պատճառով, վոր Ռուսաստանի այժմյան տըն-  
տեսական դրությունից առաջ դնալ չի կարելի առանց անց-  
նելու այն, ինչ ընդհանուր է թե՛ պետական կապիտալիզմի,  
թե՛ սոցիալիզմի համար (համաժողովրդական հաշվառում ու  
վերահսկողություն), թե սրիական անհեթեթություն է իրեն  
և ուրիշներին «դեպի պետական կապիտալիզմի կապը կա-  
տարվող եվոլյուցիայով» վախեցնելը: Այս նշանակում է՝  
մոլորված մտքով սահել հենց «եվոլյուցիայի» իրական ճա-  
նապարհից «գուրս», չըմբռնել այս ճանապարհը. իսկ գործ-  
նականում այս համադրը և դեպի հետ, դեպի մանր-սեփական-  
ատիրական կապիտալիզմի կողմը փաշելում:

Վորպեսզի ընթերցողը համոզվի, վոր յես միայն հիմա  
չեմ «բարձր» գնահատություն տալիս պետական կապիտա-  
լիզմին, այլ բայլչեկներին կողմից իշխանությունը նվաճե-  
լուց առաջ ել եմ տվել, թույլ եմ տալիս մեծ բեթել հետեյալ  
ցիտատն իմ այն բրոշյուրից, վոր գրված է 1917 թվի սեպ-  
տեմբերին և կրում է «Սպառնացող աղետը և ինչպես պետք  
է նրա դեմ կռվել» վերնագիրը:

«... փորձեցե՛ք, հասլա, յունկերա-կապիտալիստա-  
կան, կարլածատիրական-կապիտալիստական պետության  
տեղ դնել հեղափախական դեմոկրատական պետություն, այ-  
գինքն՝ մի պետություն, վոր հեղափոխականորեն խորտա-  
կում է ամեն տեսակ արտոնությունները, վոր չի վախենում  
հեղափոխական միջոցներով ամենախակատար դեմոկրա-  
տիզմն իրականացնելուց: Դուք կտեսնեք, վոր պետական-  
ժոնդուրիստական կապիտալիզմն իրապես հեղափոխական  
դեմոկրատիկ պետության մեջ անխուսափելի ու անչեղ կեր-  
պով նշանակում է մի քայլ առաջ դեպի սոցիալիզմ»:

«... Վորովհետև սոցիալիզմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ամենամեծավոր քայլը՝ պետական-կապիտալիստական մոնոպոլիայից առաջ անցնելու համար»:

«...Պետական մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիզմի ամենակրկատար նյութական նախապատրաստութիւնն է, նրա նախադուռն է, պատմական սանդուխքի այն աստիճանն է, վորի (աստիճանի) և սոցիալիզմ կոչվող աստիճանի արանքում վո՛չ մի միջանկյալ աստիճան չկա» (Եջ 27 ու 28)\*):

«...Նկատի ունեցե՛ք, վոր այս գրել եմ Կերենսկու ժամանակ, և վոր այստեղ խոսքը վո՛չ քե սլոլետարիատի դիկտատուրայի, վո՛չ քե սոցիալիստական պետութեան մասին է, այլ «հեղափոխական-դեմոկրատիկ» պետութեան: Մի՞թե պարզ չէ, թե վորքան ավելի մենք վեր ենք բարձրացել քաղաքական այս աստիճանից, վորքան ավելի լիովին մարմնացրել ենք խորհրդներում սոցիալիստական պետութեանն ու սլոլետարիատի դիկտատուրան, այնքան ավելի մեզ քիչ է թուլլատրելի վախճնալ «պետական կապիտալիզմից»: Մի՞թե պարզ չէ, վոր նյութական, տնտեսական, արտադրական իմաստով՝ մենք դեռևս սոցիալիզմի «նախադուռնը» չենք գտնվում: Յեվ այլ կերպ, քան առանց այս «նախադուռնով» անցնելու, վորին դեռ չենք հասել, հնարավոր չէ սոցիալիզմի դռնից ներս մտնել...»:

«...Չափազանց ուսանելի յե նաև հետևյալ հանգամանքը:

Յերբ ընկ. Բուխարինի հետ վիճում եյինք Կենտր. Գործ. Կոմիտեյում, նա ի միջի այլոց նկատեց. մասնագետներին մեծ ուժիկ տալու հարցում «մենք» «Լենինից աջ ենք», վորովհետև այստեղ սկզբունքներից վո՛չ մի չեղում չենք տեսնում, հիշելով Մարքսի այն խոսքերը, թե վորոչ պայման-

ներում բանվոր դասակարգի համար ամենից նպատակահարմար կլինեն վճարելով ազատվել այս ավաղակամքից (կապիտալիստների ավաղակամքից, այսինքն՝ բուրժուազիայից հետ գնել հողը, ֆարքիկաները, գործարաններն ու արտադրութեան միջոց միջոցները):

Այս չափազանց հետաքրքրական դիտողութիւնն է»:

«... Խորամուկ յեղեք Մարքսի ասածները իմաստի մեջ:

Հարցը վերաբերում էր անցյալ դարի 70-ական թվերի Անգլիային, մինչմոնոպոլիստական կապիտալիզմի կուլմինացիոն շրջանին, խոսքը մի յերկրի մասին էր, վորտեղ այն ժամանակ ամենից ավելի քիչ գորամոլութիւնն ու բյուրոկրատիա կար, մի յերկր, վորտեղ այն ժամանակ ամենից ավելի շատ հնարավորութիւններ կային սոցիալիզմի «խաղաղ» հաղթանակի համար այն իմաստով, վոր բանվորները բուրժուազիային «փրկանք» տալով գործը գլուխ բերեյին: Յեվ Մարքսն ասում էր. վորոչ պայմաններում բանվորներն ամենեկն չեն հրաժարվի բուրժուազիային փրկանք վճարելուց: Մարքսն իր ու սոցիալիստական հեղափոխութեան ապագա գործիչների ձեռքերը չէր կաշկանդում հեղաշրջման յեղանակների, կերպերի ու ձևերի հարցում, հիանալի կերպով հասկանալով, թե այն ժամանակ վորքան բազմաթիւ նոր խնդիրներ առաջ կգան, թե ինչպես կփոխվի հեղաշրջման ընթացքում իրերի դասավորութիւնը, և այս վորքան հաւանալի և ուժգին կփոխվի հեղաշրջման ընթացքում:

Իսկ հապա խորհրդային Ռուսաստանում սլոլետարիատի իշխանութիւնը նվաճելուց հետո, շահագործողների ռազմական ու նեղադուլային դիմադրութիւնն ընկճելուց հետո, մի՞թե ակնհայտ չէ, վոր մի քանի պայմաններ դասավորվել են այն պայմանների նմանութեամբ, վորոնք կարող եյին դասավորվել կես դար առաջ Անգլիայում, յեթե այն յերկրն այն ժամանակ խաղաղ կերպով անցներ դեպի սոցիալիզմ: Այն ժամանակ Անգլիայում կապիտալիստներին բանվորներին յենթարկվելը կարող էր ապահովվել հետևյալ

\*) Տես Յերկերի XXI հատ, Եջ 186, 187 ու 188. հրատ. Խմբ.

հանգամանքներով. (1) վոր բնակչության մեջ գաղաղացիության բացակայության հետեանքով բանվորները, պրոլետարները թվով լիովին գերակշռում էին (Անդլիայում 70-ական թվականներին նշաններ կային, վորոնք թույլ էին տալիս հուսալու, վոր գյուղական բանվորների մեջև սոցիալիզմը չափազանց արագընթաց հաջողություններ կունենա)։ (2) վոր պրոլետարիատը գերազանցորեն կազմակերպված երարհետակցական միություններին մեջ (այս տեսակետից Անգլիան այն ժամանակ յերկրագնդի վրա առաջին յերկիրն էր)։ (3) վոր պրոլետարիատն ուժոված եր համեմատաբար բարձր կուլտուրականությամբ և քաղաքական ազատության դարավոր դարգացման շնորհիվ կրթված ու կուլված եր. (4) վոր Անգլիայի հոյակապորեն կազմակերպված կապիտալիստները յերկար ժամանակներից ի վեր սովորություն էին ձեռք բերել քաղաքական ու տնտեսական հարցերը կոմպրոմիսներով վճռելու—այն ժամանակ նրանք էին յերկրագնդի բոլոր յերկիրների կապիտալիստների մեջ ամենալավ կազմակերպվածները (այժմ այս առաջնությունն անցել է Կերմանիային)։ Ահա թե ինչ հանգամանքերում կարող եր միտք ծագել այն մասին, թե Անդլիայում հնարավոր է, վոր կապիտալիստները խաղաղ կերպով յենթարկվեն բանվորներին։

Ներկա բոլեյին մեղանում այս յենթարկումն ապահովված է վորոչ արմատական\*) նախադրյալներով (հոկտեմբերյան հաղթությամբ և կապիտալիստների հոկտեմբերից փետրվար տեող ռադական ու նենդադուլային դիմադրությունն ընկճելով)։ Մեղանում բնակչության մեջ բանվորների, պրոլետարների թվական գերակշռության ու նրանց բարձր կազմակերպվածության փախարեն հաղթության ֆակտոր հանդիսացավ այն հանգամանքը, վոր ամենից չքավոր ու արագորեն քայքայված գյուղացիությունը պրոլետարներին ոգնող հանդիսացավ։ Վերջապես մեղանում բացակայում

\*) 1921 թ. հրատարակության մեջ՝ «կոնկրետ» եմբ

են թե՛ բարձր կուլտուրականությունն ու թե՛ կոմպրոմիսների սովորությունը։ Յեթե լավ մտածենք այս կոնկրետ պայմանների մասին, ապա մեզ համար պարզ կլինի, վոր մենք կարող ենք և պարտավոր ենք աշխատելու, վոր վոչ մի «սկետական կադիտալիզմի» չընդառաջող, վոչ մի կոմպրոմիս մտքով չանցկացնող, սակկուլացիայով ու չքավորներին կաշտելով և այլ միջոցներով խորհրդային ձեռնարկումները վիժեցնելու աշխատանքը շարունակող անկուլտուրական կապիտալիստների անխնա բնաջնջման յեղանակները միացնենք կուլտուրական կապիտալիստների վերաբերմամբ դործադրվող կոմպրոմիսի կամ փրկանքի յեղանակներին, կապիտալիստներ, վորոնք համաձայն են «սկետական կապիտալիզմին», ընդունակ են այս կիրառելու կյանքում և ոգտակար են պրոլետարիատին իրրե խոչորագույն ձեռնարկությունների խելոք ու փորձառու կազմակերպիչներ. ձեռնարկություններ, վորոնք իրոք ընդգրկում են տասնյակ միլիոնավոր մարդկանց արդյունքներ մատակարարելու դործը։

Բուխարինը հրաշալի դարգացած մարքսիստ տնտեսագետ է։ Այս պատճառով նա հիշել է, վոր Մարքսը խորապես իրավացի յեր, յերբ բանվորներին սովորեցնում եր, թե հենց սոցիալիզմին անցնելը հեշտացնելու շահերի տեսակետից կարևոր է խոչորագույն արտադրության կազմակերպությունը պահպանել, և լիովին թույլատրելի յե այն միտքը, թե պետք է լավ վճարել կապիտալիստներին, փրկանք տալ նրանց, յեթե հանգամանքներն այնպես դասավորվեն (իրրե բացառություն, Անգլիան այն ժամանակ բացառություն եր), վոր կապիտալիստներին հարկադրեն խաղաղ կերպով յենթարկվել և կուլտուրական յեղանակով, կազմակերպված կերպով անցնել սոցիալիզմին՝ փրկանքի պայմանով։

Սակայն Բուխարինը սխալանքի մեջ է ընկել, վորովհետև չի խորհրդածել Ռուսաստանի ներկա բոլեյի, հենց

բաղադրիչ մի բոլորից կոնկրետ առանձնահատկություն մատին, յերբ մենք՝ Ռուսաստանի պրոլետարիատը, մեր քաղաքական իշխանություն հղորդվումք ամեն մի Անդլիայից ել ու ամեն մի Գերմանիայից ել առաջ ենք կանգնած և միևնույն ժամանակ բարեկարգ պետական կապիտալիզմի կազմակերպություն, կուլտուրայի մակարդակով, սոցիալիզմը «մղտցնելու» նյութական-արտադրական նախապատրաստության աստիճանով Արևմտյան Եվրոպայի ամենահետամնաց պետություններից ել հետ ենք մնացել: Մի՞թե պարզ չե, վոր այս առանձնահատուկ դրությունից բխում է հենց առանձնահատուկ «փրկանքի» անհրաժեշտությունը, մի փրկանք, վոր բանվորները պետք է առաջարկեն ամենակուլտուրական, ամենատաղանդավոր, կազմակերպչապես ամենից ընդունակ կապիտալիստներին, վորոնք պտտրաստ են խորհրդային իշխանության մոտ ծառայության մտնելու և բարեկարգորեն նպաստելու «պետական» խոշոր ու խոշորագույն արտադրություն կազմակերպմանը: Մի՞թե պարզ չե, վոր այսպիսի առանձնահատուկ դրության ժամանակ մենք պետք է խուսափենք յերկու տեսակ սխալներից, վորոնցից ամեն մեկն իր ձևով մանր-բուրժուական է: Մի կողմից, անուղղելի սխալ կլիներ հայտարարելը, թե յերբ ընդունում ենք մեր տնտեսական «ուժերի» ու քաղաքական ուժի անհամապատասխանությունը, ապա «հետևաբար» չպետք էր խել իշխանությունը: Այդպես դատում են «պատյանի միջի մարդիկ», վորոնք մոռանում են, վոր յերբեք «համապատասխանություն» չի լինի, վոր այն չի կարող լինել հասարակության զարգացման, ինչպես և բնության զարգացման մեջ, վոր մի շարք փորձերի միջոցով միայն, վորոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած միակողմանի կլինի ու վորոշ անհամապատասխանության թերությունը կունենա, — կստեղծվի հաղթական սոցիալիզմը քաղոր յերկիրները պրոլետարների հեղափոխական աշխատակցությունից:

Մյուս կողմից՝ ակնհայտի սխալ կլիներ աղատություն տալ աղմուկ, աղաղակ բարձրացնողներին ու ֆրադյորներին, վորոնք իրենց թույլ են տալիս հրապուրվել «վառ» հեղափոխականությամբ, բայց վորոնք զուսպ, մտածված, կշոված, ամենադժվար անցումներն ել հաշվի առնող հեղափոխական գործունեություն անընդունակ են:

Հեղափոխական կուսակցությունները զարգացման ու բալլչեկիմի՝ նրանց դեմ մղած կռիվի պատմությունը բարեխառաբար մեկ ժառանգություն է թողել խիստ վորոշ պծած տիպեր, վորոնց միջից ձախ ես-երներն ու անարխիստները բավական ակնատու կերպով մարմնացնում են վատթար հեղափոխականների տիպը: Նրանք այժմ գոռում են — մինչև հիստերիկա, շնչասպառ լինելով, աղաղակում են «աջ բալլչեկիները» «համաձայնողականություն» դեմ: Բայց նրա՞ք մտածել չեն կարողանում այն մասին, թե ինչով եր վատ «համաձայնողականությունը» և ինչու յեն պատմությունն ու հեղափոխության ընթացքն արդարացի կերպով դատապարտել այն:

Կերենակու ժամանակների համաձայնողականությունն իշխանությունը հանձնում եր իմպերիալիստական բուրժուազիային, իսկ իշխանության հարցը յուրաքանչյուր հեղափոխության հիմնական հարցն է: 1917 թ. հոկտեմբեր-նոյեմբերին բալլչեկիների մի մասի համաձայնողականությունը կամ վախենում եր պրոլետարիատի ձեռքով իշխանությունը խլելուց և կամ ցանկանում եր իշխանությունը հավասարապես բաժանել վո՛չ միայն «անհուսալի ուղեկիցների» հետ, վորպիով եր ձախ ես-երները, այլև մեր թշնամիների, չեր-նովականների, մենչեկիների հետ, վորոնք անխուսափելի կերպով մեկ կխանդարելին հիմնական հարցում, Սահմանադիր ժողովը ցրելում, Բաղայիվսկիներին անխնա խորտակելում, խորհրդային հիմնարկները լիովին կյանքի մեջ մտնցնելիս, յուրաքանչյուր կոնֆիսկացիայի ժամանակ:

Այժմ իշխանութիւնը գրավւած, պահպանւած ու ամբարտնջւած է մի կուսակցութեան, պրոլետարիատի կուսակցութեան ձեռքում՝ նույնիսկ առանց «անհուսալի ուղեկիցներ»։ Համաձայնողականութեան մասին խոսել այժմ, յերբ խոսք չկաւ նույնիսկ չի կարող խոսք լինել իշխանութեանը բաժանելու կամ բուրժուազիայի դեմ ուղղւած պրոլետարների դիկտատուրայից հրաժարելու մասին, նշանակում է պարզապէս թուժակի նման կրկնել սերտած, բայց չհասկացած բառեր։ «Համաձայնողականութիւն» անվանել այն, վոր հասնելով մի գրութեան, յերբ կարող ենք և պարտաւոր ենք յերկիրը կառավարելու, յերբ առանց վորդին ախտոստիւ աշխատում ենք մեր կողմը գրավել կապիտալիզմի վարժեցրած տարրերից ամենակուլտուրականներին և սրանց ծառայութեան ընդունել ընդդէմ մանր-սեփականատիրական քայքայման, այս նշանակում է՝ ամենեւին չկարողանալ սոցիալիստական շինարարութեան անտեսական խնդիրներին մասին մտածել<sup>\*)</sup>։

#### ՊԱՐԵՆՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ, ԱՌԵՎՏՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԿՈՆՑԵՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1918 թ. հայտնւած այս դատողութիւններում, վոր մեջ բերինք, մի չարք սխալներ կան պայմանաժամերի մասին։ Պայմանաժամերն ավելի յերկար դուրս յեկան, քան այն ժամանակ յենթադրւում էր։ Այս պարմանալի չէ։ Բայց մեր եկոնոմիկայի հիմնական տարրերը մնացել են նույնը։ Փյուղացիական «չքաղաքացիութեանը» (պրոլետարներն ու կիսապրոլետարները) շատ բազմաթիւ գեղքերում միջակ գյուղացիներին յի վերածվել։ Սրանից մանր-սեփականատիրական, մանրբուրժուական «տարրերը» դուրեղացել է։ Իսկ 1918-1920 թ.թ. քաղաքացիական պատերազմը չափազանց ուժեղացրեց յերկ-

րի քայքայումը։ Քոս արտադրողական ուժերի վերկանդնմանն արդեւ չանդիսացաւ և հենց ամենից ավելի պրոլետարիատին արյունաքամ արեց։ Սրան ավելացաւ 1920 թ. անբերութիւնը, կերի պակասութիւնը, անասունների կոտորածը, վոր ե՛լ ավելի խանգարեց արդյունաբերութեան և տրանսպորտի վերականգնմանը, աղքատիւ, որինակ, գյուղացիների ձիերով մեր գլխավոր վառելիքը՝ փայտը տեղափոխելու վրա։

Իբրեւ հետեւեց այս բոլորի՝ 1921 թ. դարնանը քաղաքական հանգամանքներն այնպէս դասավորվեցին, վոր գյուղացիութեան դրութիւնը լավացնելու և նրա արտադրողական ուժերն ավելացնելու համար շուտափույթ, ամենավրճառական, ամենից արտակարգ միջոցներն անհետաձգելիորեն անհրաժեշտ դարձան։

Ինչո՞ւ հենց գյուղացիների ու վոչ թե բանվորների։

Վորովհետեւ բանվորների վիճակը բարելավելու համար հարկավոր են հաց ու վառելիք։ Ամբողջ պետական տնտեսութեան տեսակետից այժմ ամենամեծ «խանգարումը» հենց սրանից է առաջանում։ Իսկ հացահատիկի արտադրութիւնն ու հավաքելը, վառելիք պատրաստելն ու տեղափոխելն այլ կերպ չի կարելի, քան յեթե՝ գյուղացիութեան դրութիւնը լավացնելով ու նրա արտադրողական ուժերն ավելացնելով միայն։ Պետք է գյուղացիութեանից սկսել։ Ով այս չի հասկանում, ով հակված է գյուղացիներին առաջին տեղը դնելու հարցում պրոլետարիատի դիկտատուրայից «հրաժարվելու» կամ հրաժարվելու նման մի բան նկատել, նա պարզապէս չի թափանցում գործի մեջ և իրեն հանձնում է խրախուսել իշխանութեանը։ Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի ձեռքով քաղաքականութիւնը ղեկավարելն է։ Պրոլետարիատը իբրեւ ղեկավարող, տիրապետող դասակարգ, պետք է կարողանա քաղաքականութեանն այնպիսի ընթացք տալ, վոր առաջին հերթին լուծի ամենաանհետաձգելի, ամենից քա-

\*) Տես Յերկեղի XXII հատ, էջ 511-522 հոտ հրատ, Խմբ.

վոր» խնդիրը: Այժմ ամենից ավելի անհետաձգելի յեն այն միջոցները, վորոնք կարող են անմիջապես բարձրացնել դուր-դացիական տնտեսութեան արտադրողական ուժերը: Ս'իայն այս ֆակտայարիով կարելի յե հասնել թե՛ բանվորներին դուր-թյունը բարելավելուն և թե՛ բանվորներին ու գյուղացիներին դաշինքն ամրապնդելուն, ոլորեալութեամբ գլխատուրան ամրապնդելուն: Այն սլոլեալը կամ սլոլեալութեամբ այն ներկայացուցիչը, վոր կցանկանար բանվորներին դուրթյունը բարելավելուն դիմել վոչ այս ֆակտայարիով, գործնականում ուղիտակ-գլխարդականներին ու կապիտալիստներին աջակիցը կհանդիսանար: Վորովհետեւ այս ճանապարհով չգնալ՝ նշա-նակում և բանվորներին համբարային շահերը բարձր դասել նրա դասակարգային շահերից, նշանակում և բանվորին անմի-ջական րուսեյական, մասնակի ոգտի համար զոհարելել ամ-բողջ բանվոր դասակարգին, նրա գլխատուրային շահերը, կալվածատերերին ու կապիտալիստներին դեմ գյուղացիներին հետ կնքած նրա դաշինքի շահերը, կապիտալի լծից աշխա-տանքն աղատադրելու կուլի մեջ նրա ղեկավարող դերի շա-հերը:

Այսպէս, ուրեմն, առաջին հերթին հարկավոր են գյուղա-ցիութեան արտադրողական ուժերն ավելացնելու շուտա-փուլթ ու լուրջ միջոցներ:

Այս բանը գլուխ բերել չի կարելի առանց պարենավոր-ման քաղաքականութեան լուրջ փոփոխութեաններին: Այսպի-սի մի փոփոխութեան և պարենամասնատրումը պարենահարկով փոխարինելը, վորից բղխում և հարկը վճարելուց հետո գոնե տեղական տնտեսական շրջանառութեան ասպարեզում սուե-տրին աղատութեան տալը:

Պարենամասնատրումը պարենահարկով փոխարինելու եյու-թյունն ի՞նչ և:

Այս մասին սխալ մտապատկերներ չատ են տարածված: Սխալը մեծ մասամբ այն բանից և առաջանում, վոր այս անց-

ման իմաստի մեջ չեն թափանցում, հարց չեն տալիս իրենց, ի՞նչ ինչից դեպի ինչն և տանում այս անցումը: Գործն այնպիս ևն պատկերացնում, վոր իբրեւ թե անցումը տեղի յե ունեցել ընդհանուր առմամբ վերցրած կոմունիզմից դեպի ընդհանուր առմամբ վերցրած բուրժուականութեանը: Այս սխալի դեմ հարկավոր և անխուսափելի կերպով մատնանշել 1918 թ. մայիսին տաճներս:

Պարենահարկը ծայրահեղ կարիքից, քայքայումից ու պա-տերազմից առաջացած յուրահատուկ «ռազմական կոմունիզ-մից» դեպի կանոնավոր սոցիալիստական արդյունաբախտա-նակութեան անցնելու ձևերից մեկն և: Իսկ այս վերջինը, — սոցիալիստական արդյունաբախտանակութեանը, իր հեր-թին, բնակչութեան մեջ մանր գյուղացիութեան գերակշու-թյունից բղխած առանձնահատկութեաններ ունեցող սոցիա-լիզմից դեպի կոմունիզմ անցնելու ձևերից մեկն և:

Յուրահատուկ «ռազմական կոմունիզմ» այն եր, վոր մենք փաստորեն գյուղացիներից վերցնում եյինք բոլոր ա-վելցուկները և յերբեմն ել նույնիսկ վո՛չ թե ավելցուկները, այլ գյուղացու պարենավորման համար անհրաժեշտ մասը, առնում եյինք բանակին ու բանվորներին պահելու ծախսերը ծածկելու նպատակով: Առնում եյինք մեծ մասամբ իրքեւ պարտք՝ թղթադրամներ տալով: Այլապէս մանր-գյուղա-ցիական քայքայված յերկրում կալվածատերերին ու կադի-տալիստներին չեյինք կարող հաղթել: Յեով այն փաստը, վոր մենք հաղթեցինք (հակառակ աշխարհիս ամենահզոր պետու-թյունների կողմից մեր շահագործողներին ցույց տված ո-ժանդակութեան), միայն այն չե ցույց տալիս, թե բանվոր-ներն ու գյուղացիներն իրենց աղատադրութեան համար միշտ պայքարում հերոսութեան ինչ հրաշքներ կատարելու ընդու-նակ են: Այս փաստը ցույց և տալիս նաեւ այն, թե գործնակա-նում մենչեիկները, ես-երները, Կաուցկին ու Լնկ. բուրժուա-աղիայի սպասաւորներին ինչպիսի դեր եյին կատարում, յերբ

այս «Պաղմական կոմունիզմը» մեր յերևոյին եյին չպրոտւմ իբրև մեղադրանք: Այս պետք է համարել մեր յերախտիքնե-  
րից մեկը:

Բայց պակաս անհրաժեշտ չե իմանալ այս յերախտիքի  
խակական չափը: «Պաղմական կոմունիզմը» պատերազմի ու  
քայքայման հարկադրանքի ծնունդ էր: Նա պրոլետարիատի  
տնտեսական նպատակներին համապատասխանող քաղաքա-  
կանութիւնն էր և չէր ել կարող լինել: Այն մի ժամանակա-  
վոր միջոց էր: Մանր գյուղացիական յերկրում իր գիւտա-  
տուրան իրականացնող պրոլետարիատի ուղիղ քաղաքակա-  
նութիւնն այն կլինի, վոր նա գյուղացուն անհրաժեշտ ար-  
դունարեւակսն արդյունքները հացի հետ փոխանակի: Մի-  
այն այսպիսի պարենավորման քաղաքականութիւնն և համա-  
պատասխանում պրոլետարիատի նպատակներին, միայն այդ-  
պիսի քաղաքականութիւնն է ընդունակ սոցիալիզմի հիմքերն  
ամրապնդելու և նրա լիակատար հաղթանակին հասցնելու:

Պարենհարկը մի անցում է դեպի այս քաղաքականու-  
թիւնը: Մենք դեռևս այնքան քայքայված ենք, այնքան  
ճգմված պատերազմի ծանրութիւնից (պատերազմ, վոր յե-  
րեկ զոյութիւն ունէր և կարող է վաղը բորբոքել կապիտա-  
լիստների ազահութիւնն ու կատաղութիւնն ընդհանր), վոր  
մեզ հարկավոր յեղած ամբողջ հացի փոխարեն չենք կարող  
արդյունարեւակսն արդյունքներ տալ դուրսացուն: Այս ի-  
մանալով՝ մտցնում ենք պարենհարկը, ալիքն ընդհանր ու  
բանփորների համար նվազագույն չափով անհրաժեշտ հացի  
քանակութիւնն ստանում ենք իբրև հարկ, իսկ մնացածը  
պիտի փոխանակենք արդյունաբերութիւնն արդյունքներ  
հետ:

Սրա հետ միաժամանակ չպետք է մոռանալ նաև հետե-  
յալը: Կարիքն ու քայքայումն այնքան մեծ են, վոր մենք  
չենք կարող միանգամից վերականգնել խոշոր, գործարանա-  
յին, պետական, սոցիալիստական արտադրութիւնը: Այս

բանի համար խոշոր արդյունաբերութիւնն կենտրոններում  
հացի ու վառելիքի մեծ պաշարներ ևն հարկավոր, մաշված  
մեքենաները նորերով փոխարինել և հարկավոր և այլն: Փոր-  
ձով համոզվեցինք, վոր այս միանգամից կատարել չի կարե-  
լի, և դիտենք, վոր իմպերիալիստական քայքայիչ պատե-  
րազմից հետո նույնիսկ ամենահարուստ ու ամենից առաջա-  
դեմ յերկիրները վորոչ, բավական յերկար տարիների ըն-  
թացքում միայն կկարողանան լուծել այս խնդիրը: Նշանա-  
կում ե՝ անհրաժեշտ է վորոչ չափով նպաստել մալի արդյու-  
նաբերութիւնն վերականգնմանը, վորը չի պահանջում մեքե-  
նաներ, չի պահանջում հումքի, վառելիքի, պարենի վորչ պե-  
տական ու վորչ ել խոշոր պաշարներ, վորը կարող է գյուղա-  
ցիական տնտեսութիւնն իսկույն վորոչ ողնութիւնն հասցնել  
ու նրա արտադրողական ուժերը բարձրացնել:

Իսկ ի՞նչ է լինում սրա հետեանքը:

Հետեանքը լինում է այն, վոր առետրի վորոչ (թեկուզ  
միայն տեղական) աղատութիւնն հիմքի վրա հաստատվելով՝  
վերածնվում են մանր բուրժուազիան ու կապիտալիզմը: Այս  
անկասկած է: Այս յերեւոյթի հանդեպ աչք փակելը ծիծա-  
ղելի յէ:

Հարց է ծագում. արդյոք անհրաժեշտ է այս: Արդյոք  
կարելի՞ յէ այս արդարացնել: Արդյոք վտանգավոր չե՞ այս:  
Նման հարցեր չառ են տալիս, և այս հարցերը մեծ մա-  
սամբ յերեւան են հանում հարցնողների պարզամտութիւնը  
միայն (մեղմ արտահայտված):

Նայեցե՛ք այն բանին, թե 1918 թ. մայիսին յես ինչպե՞ս  
էյի վորոչում մեր եկոնոմիկայի մեջ զոյութիւնն ունեցող  
զանազան հասարակական-տնտեսական կառուցքների ներկա  
տարրերը (բաղադրիչ մասերը): Վոր վրի չի հաջողվի հեր-  
քել, վոր մեղանում զոյութիւնն ունեն այս բոլոր հինգ տա-  
տիճանները կամ այս բոլոր հինգ տատիճանների բաղադրիչ  
մասերը՝ նահապետականից, այսինքն՝ կիսավայրենականից

սկսած մինչև սոցիալիստականը: Վոր մանր-դյուղացիական յերկրում զերակչում և մանր-դյուղացիական, այսինքն՝ մասամբ նահապետական, մասամբ մանր-բուրժուական «կա-սուցքը», այս ինքնըստինքյան ակներև և: Յեթե կա փոխա-նակություն, ապա մանր տնտեսության զարգացումը մանր-բուրժուական զարգացում և, կապիտալիստական զարգացում և, այս անվիճելի ճշմարտություն և, քաղաքատնտեսության այրբեմական ճշմարտություն, վոր հաստատվում և նաև ամե-նորյա փորձով ու նույնիսկ կենսվորի դիտողությամբ:

Իսկ այս տնտեսական իրականության հանդեպ ի՞նչ քաղաքականություն կարող և վարել սոցիալիստական պրո-լետարիատը: Սոցիալիստական խոշոր գործարանի արտա-դրությունից տալ մանր դյուղացուն սրան հարկավոր բոլոր արդյունքները՝ հացահատիկի ու հումքի հետ փոխանակե-լով: Այս ամենացանկալի, ամենից «նիշտ» քաղաքականու-թյունը կլինե՞ր. մենք հենց այս ել սկսեցինք: Բայց մենք չենք կարող բոլոր արդյունքները տալ, հեռու յենք կարողանալուց և շատ չուտով ել չենք կարող. համենայն դեպս մինչև այն ժամանակ չենք կարող, քանի դեռ չենք վերջացրել ամբողջ յերկրի՝ ելեկտրիֆիկացիայի գոնե առաջին հերթի աշխա-տանքները: Իսկ ի՞նչպես անենք: Կամ պետք և փորձենք ար-դելել, բոլորովին կաշկանդել մասնավոր, վոչ պետական փոխանակության, այսինքն առևտրի, այսինքն կապիտալիզ-մի ամեն մի զարգացումը, վոր անխուսափելի յե միլիոնավոր մանր արտադրողների դոյության ժամանակ: Այսպիսի քա-ղաքականությունը հիմարություն կլինե՞ր և ինքնասպանու-թյուն այն կուսակցության կողմից, վոր կփորձեր այս կա-տարել: Հիմարություն կլինե՞ր, վորովհետև այսպիսի մի քա-ղաքականություն տնտեսապես անհնարին բան և. ինքնա-սպանություն կլինե՞ր, վորովհետև նման քաղաքականություն փորձող կուսակցություններն անխուսափելի կերպով խոր-տակվում են: Ի՞նչ մեղքներս թաղցնենք. կոմունիստներն մեջ

կային վոմանք, վորոնք «մտածմունքով, խոսքով ու գործով» մեղանչում եյին, հենց այսպիսի քաղաքականության մեջ ընկնելով: Այսպես և այս սխալները մեր վրայից թոթափել: Անպայման հարկավոր և ձեռք վերցնել այս սխալները, ա-յապես բոլորովին վատ կլինի:

Յեվ կամ (վերջին հնարավոր ու միակ խելացի քաղաքա-կանությունը) պետք և չփորձենք արդելել կամ կաշկանդել կապիտալիզմի զարգացումը, այլ աշխատենք այն ուղղել դե-պի պետական կապիտալիզմի հունը: Այս հնարավոր և տըն-տեսապես, վորովհետև պետական կապիտալիզմն այս կամ այն ձևով, այս կամ այն աստիճանով դոյություն ունի ամեն տեղ, վորտեղ ազատ առևտրի ու ընդհանրապես կապիտա-լիզմի տարրեր կան:

Արդյոք խորհրդային պետության, պրոլետարիատի դիկ-տատուրայի ու պետական կապիտալիզմի դուրդողումը, միա-ցումը, միատեղ դոյությունը հնարավո՞ր բան և:

Իհարկե հնարավոր և: Յես հենց այս եյի ապացուցում 1918 թ. մայիսին: Հույս ունեմ, վոր յես այս ապացուցել եմ 1918 թ. մայիսին: Բացի սրանից, յես այն ժամանակ ապա-ցուցել եմ, վոր մանր-սեփականատիրական (թե՛ մանր-նա-հապետական ու թե՛ մանր-բուրժուական) տարրերի հետ հա-մեմատած, պետական կապիտալիզմը մի քայլ և դեպի առաջ: Անհամար սխալներ են գործում, յերբ պետական կապիտա-լիզմը կողք-կողքի յեն դնում կամ համեմատում սոցիալիզմի հետ միայն, այսինչ ներկա քաղաքական-տնտեսական արտա-դրության հետ համեմատելը պարտադիր և:

Ինչպես թեորիական, այնպես և գործնական ամբողջ հարցն այն և, վորպեսդի ուղիղ յեղանակներ դռնենք այն բա-նի համար, թե ինչպես պետք և կապիտալիզմի (մինչև վորոչ աստիճան ու մինչև վորոչ ժամանակ) անխուսափելի զարգա-ցումն ուղղենք դեպի պետական կապիտալիզմի հունը, ինչ պայմաններով չըջապատենք այս ուղղումը, ինչպես անենք,

վոր պետական կապիտալիզմը մոտիկ ապագայում սոցիալիզմի վերածվի:

Այս հարցի լուծմանը մոտենալու համար ամենից առաջ պետք է ըստ կարելույն ավելի պարզ պատկերացնենք, թե մեր խորհրդային սիստեմի մեջ, մեր խորհրդային պետութ-  
թյան չրջանակներում պետական կապիտալիզմն ինչ կլինի և ինչ կարող է լինել գործնականում:

Թե խորհրդային իշխանությունն ինչպես և ուղղում կապիտալիզմի զարգացումը դեպի պետական կապիտալիզմի հունը, թե նա ինչպես է «տնկում, պատվաստում» պետական կապիտալիզմ, սրա ամենապարզ դեպքը կամ որինակը կոն-  
ցեսիաներն են: Մեկանում հիմա ամենքն էլ համաձայն են, վոր կոնցեսիաներ անհրաժեշտ են, բայց բոլորը չեն խորհրդա-  
դածում այն մասին, թե կոնցեսիաների նշանակութունն ինչ է: Հասարակական-տնտեսական կառույցների տեսակետից կոնցեսիաներն ի՞նչ են խորհրդային սիստեմի ժամանակ: Այս  
մի պայման, մի բլոկ, մի դաշինք է, վոր խորհրդային, այսինքն պրոլետարական, պետական իշխանությունը կնքում է պետական կապիտալիզմի հետ ընդդեմ մանր-սեփականատի-  
րական (նահապետական ու մանր-բուրժուական) տարերքի: Կոնցեսիաները կապիտալիստ է: Նա գործը վարում է կապի-  
տալիստներն, շահույթի համար, նա համաձայնում է պրոլե-  
տարական իշխանության հետ պայման կնքել արտակարգ, արտասովոր շահույթի համար ու կամ այնպիսի հումք ստա-  
նալու համար, վոր այլ կերպ ձեռք բերել անհնարին է նրա համար և կամ չափազանց զեժվար: Խորհրդային իշխանու-  
թյան ոգուտը լինում է այն, վոր իսկույն կամ ամենակարճ ժամանակում արտադրողական ուժերը զարգանում են, ար-  
դյունքների քանակը մեծանում է: Ասենք, մենք ունենք հա-  
րյուր հատ այս-ինչ գործանոցներ, հանքավայրեր, անտառա-  
մասեր: Մենք այս բոլորը մշակել չենք կարող. մեքենայեր, պարեն, տրանսպորտ չունենք: Նույն պատճառներով էլ վատ

ենք մշակում մնացած բնագավառները: Խոշոր ձեռնարկու-  
թյունների վատ ու անբավարար չափով արդյունքներ պատ-  
րաստելուց առաջանում է մանր-բուրժուական տարերքի ու-  
ժեղացում իր բոլոր արտահայտություններով. չրջակայքի  
(հետո նաև ամբողջ յերկրի) գյուղացիական տնտեսության  
թուլացում, նրա արտադրողական ուժերի ջլտում, նրա՝  
դեպի խորհրդային իշխանությունը տածած վստահության  
լքում, հափշտակություններ ու մասսայական մանր (ա-  
մենալիտանգավոր) սպեկուլյացիա և այլն: Կոնցեսիաների ձե-  
վով պետական կապիտալիզմ տնկելով՝ Խորհրդային իշխու-  
նությունն սժեկացնում է խոշոր արտադրությունն ընդդեմ  
մանրի, առաջադեմն ընդդեմ հետամնացի, մեքենայականն  
ընդդեմ ձեռքի արտադրության, ավելացնում է իր ձեռքում  
յեղած խոշոր ինդուստրիայի արդյունքները (արդյունքների  
վորոշ մասի ստացումով), պետականորեն կարգավորված  
տնտեսական հարաբերություններն ուժեղացնում է իրրև հա-  
կալչիւ մանր-բուրժուական, անիշխանական հարաբերու-  
թյունների: Պատշաճ չափերով ու դոզուլթյամբ վարած  
կոնցեսիոն քաղաքականությունը, անկասկած, կողնի մեղ  
արտադրության վիճակը, բանվորների ու գյուղացիների  
դուլթյունն արագությամբ (մի վորոշ, փոքր աստիճան) բա-  
րելավելու, իհարկե, վորոշ գոհաբերությունների գնով, ամե-  
նաթանգաթեք արդյունքներից տասնյակ ու տասնյակ միլիոն  
վուլթ կապիտալիստին հանձնելու գնով: Ուժերի հարաբե-  
րակցությունից է կախված և այս ուժերի պայքարն է վրձ-  
ուում այն չափերի և այն պայմանների սահմանումը, վորոնց  
ժամանակ կոնցեսիաները մեղ ձեռնտու յեն և վտանգավոր  
չեն մեղ համար, վորովհետև կոնցեսիոն նույնպես կուլի մի  
տեսակ է, դասակարգային կուլի շարունակությունն ուրիշ  
ձեռով և վո՛չ մի դեպքում նա դասակարգային կուլի դասա-  
կարգերի համերաշխությամբ փոխարինել չի նշանակում:  
Պրակտիկան ցույց կտա կուլի յեղանակները:

Խորհրդային սխտեմի մեջ պետական կապիտալիզմի ձևերի հետ համեմատած՝ կոնցեսիաների ձևով պետական կապիտալիզմը, կարելի չե տեսլ, ամենահասարակ, ցայտուն, պարզ ու ճիշտ դժվածն է։ Մենք այս դեպքում ունենք մի ուղղակի ֆորմալ, դրավոր պայման, վոր կնքում ենք արևմտա-յեվրոպական ամենակոլտուրական, առաջավոր կապիտալիզմի հետ։ Մենք ճիշտ գիտենք մեր ոգուտներն ու մեր կորուստերը, մեր իրավունքներն ու մեր պարտականությունները, ճիշտ գիտենք այն պայմանաժամը, վորի ընթացքում տալիս ենք կոնցեսիան, գիտենք պայմանաժամը լրանալուց առաջ հետգնման պայմանները, յեթե պայմանագիրը նախատեսնում է պայմանաժամից առաջ հետ գնելու իրավունքը։ Մենք վորոչ «տուրք» ենք տալիս համաշխարհային կապիտալիզմին, «փրկանք ենք վճարում» նրան այս ու այն հարաբերությամբ՝ իսկույն վորոչ միջոց ձեռք բերելով Խորհրդային իշխանության դրությունն ամրապնդելու համար, մեր տընտեսությունը վարելու պայմանները բարելավելու համար։ Կոնցեսիաների վերաբերմամբ հարցի ամբողջ դժվարությունն այն է, վոր կոնցեսիոն պայմանագիր կնքելու ժամանակ պետք է ամեն բան ծանր ու բարակ քննել ու կշռել, իսկ այնուհետև պետք է նրա կատարմանը հետևել։ Այստեղ, անկասկած, դժվարություններ կան, և սկզբում հալանորեն անխուսափելի յեն սխալները, բայց այս դժվարություններն սովորելով զժվարություններն են սոցիալական հեղափոխության մյուս խնդիրների համեմատությամբ, մասնավորապես պետական կապիտալիզմը դարգացնելու, թույլատրելու և պատվաստելու մյուս ձևերի համեմատությամբ։

Կուսակցական ու խորհրդային բոլոր աշխատողները տմենակարեւոր խնդիրը, վոր կապված է պարենհարկի մտցընելու հետ, այն է, վոր նրանք կարողանան կոնցեսիոն (այսինքն «կոնցեսիոն» պետական կապիտալիզմի նմանությունն ունեցող) քաղաքականության եյական դադախարները, սկըղ-

բունքները, հիմունքները կերտել կապիտալիզմի, աղատ առետրի, տեղական շրջանառության մյուս ձևերի վերաբերմամբ և այլն։

Վերցնենք կոոպերացիան։ Իդուր չեր, վոր պարենհարկի դեկրետը պատճառ յեղավ կոոպերացիայի վերաբերյալ կանոնադրությունները վերաքննելու և նրա «աղատությունն» ու իրավունքները վորոչ չափով լայնացնելու<sup>\*)</sup>։ Կոոպերացիան ել պետական կապիտալիզմի մի տեսակն է, միայն ավելի քիչ պարզ, ավելի աղտ դժված, ավելի խճճված մի տեսակը, վոր գործնականում մեր իշխանության առաջ ավելի մեծ դժվարություններ է դնում։ Մանր ապրանքարտադրողները կոոպերացիան (վորի մասին է խոսվում այստեղ, իրբև մանր-դյուղացիական յերկրում գերիշխող ու տիպիկ ձևի մասին և վոր՝ թե բանվորական կոոպերացիայի մասին) անխուսափելի կերպով առաջ է բերում մանր-բուրժուական, կապիտալիստական հարաբերություններ, նպաստում է նրանց զարգամանը, կապիտալիստիկներին քաշում է առաջին շարքը, նրանց է տալիս ամենամեծ ոգուտը։ Այս ուրիշ կերպ ել չի կարող լինել, քանի վոր գոյություն ունի մանր տնտեսատերերի գերակշռություն, այլև փոխանակության հնարավորություն ու անհրաժեշտություն։ Ուսաստանի ներկա պայմաններում կոոպերացիայի աղատությունն ու իրավունքները կապիտալիզմի աղատությունն ու իրավունքներ են նշանակում։ Այս ակներև ճշմարտության հանդեպ աչք փակելը հիմարություն կամ հանցանք կլիներ։

Բայց «կոոպերատիվ» կապիտալիզմը, մտնատիրական կապիտալիզմից տարբերվելով, Խորհրդային իշխանության ժամանակ հանդես է դալիս իրբև պետական կապիտալիզմի մի այլ տեսակ և իրբև այդպիսին այս բուպելին նա մեկ ավելի շահավետ է ու ոգտակար, — հասկանալի յե, վորոչ չափով։ Վորչափով պարենհարկը մնացածի (իրբև պարենհարկ չը-

\*) Տես Յերկերի XXVI հատորը, առև հրատ, էջ 242-243; եմբ.

դանձիող մասի) վաճառման աղատութիւնն և նշանակում, այն չափով մեղ անհրաժեշտ և ջանք դորձադրել, վոր դեպի կոոպերատիվ կապիտալիզմի հունն ուղղենք կապիտալիզմի այս դարդացումը, վորովհետեւ վաճառելու աղատութիւնը, առևտրի աղատութիւնը կապիտալիզմի դարդացում և: Կոոպերատիվ կապիտալիզմը նման և տնտեսականին այն տեսակետից, վոր հեշտացնում և հաշվառումը, վերահսկողութիւնը, հսկումը, պետութիւն (այս դեպքում խորհրդային) ու կապիտալիստի միջև կնքած պայմանագրի հարաբերութիւնները: Կոոպերացիան, իբրեւ առևտրի ձև, մասնավոր առևտրից ավելի չահալետ ու ողջակար և վո՞չ միայն մատնանշած սպաճառներով, այլև այն պատճառով, վոր նա հեշտացնում և միլիոնավոր բնակչութիւն, հետո նաև ամբողջ բնակչութիւն կաղմակերպումն ու միավորումը մինչև վերջին մարզը, իսկ այս հանգամանքն իր հերթին վիթխարի առավելութիւնն և պետական կապիտալիզմից այնուհետև սոցիալիզմին անցնելու տեսակետից:

Համեմատենք կոնցեսիաներն ու կոոպերացիան իբրեւ պետական կապիտալիզմի ձևեր: Կոնցեսիայի պատմանդանը խոշոր, մեքենական արդյունաբերութիւնն և, կոոպերացիայինը՝ մանր, ձեռքի, մասամբ նաև նահապետական արտադրութիւնը: Կոնցեսիան յուրաքանչյուր առանձին կոնցեսիոն պայմանագրով վերաբերում և մի կապիտալիստի, մի ֆիրմայի, մի սինդիկատի, արտելի կամ տրեստի: Կոոպերացիան ընդգրկում և բաղմահադարձ, նույնիսկ միլիոնավոր մանր տնտեսատերերի: Կոնցեսիան թուլլատրում և և նույնիսկ յենթադրում ճիշտ պայմանագիր ու ճիշտ վորոշված ժամանակամիջոց: Կոոպերացիան չի թուլլատրում վոչ ճիշտ պայմանագիր և վոչ ել բոլորովին ճիշտ վորոշված ժամանակամիջոց: Կոոպերացիայի վերաբերյալ որենքը չեղյալ հայտաբարելը շատ ավելի հեշտ և, քան կոնցեսիայի պայմանագրերը վոչնչացնելը, սակայն պայմանագիրը վոչնչացնել՝ նշանա-

կում և միանգամից, պարզապէս իսկույն վերացնել կապիտալիստի հետ կնքած տնտեսական դաշինքի կամ տնտեսական «կենսակցութիւն» վաստական հարաբերութիւնները, այնինչ կոոպերատիվների վերաբերյալ որենքի վոչ մի վերացում, վոչ մի որենք ընդհանրապէս վոչ միայն չեն վոչնչացնի Խորհրդային իշխանութիւնն ու մանր կապիտալիստիկների վաստակն «կենսակցութիւնը», այլ և ընդհանրապէս չեն կարող տնտեսական վաստական հարաբերութիւնները վերացնել: Կոնցեսիոններին «հսկելը» հեշտ և, կոոպերատորներինը՝ դժվար: Կոնցեսիայից սոցիալիզմին անցնելը խոշոր արտադրութիւն մի ձևից խոշոր արտադրութիւն մի ուրիշ ձևին անցնելն և: Մանր տնտեսատերերին՝ կոոպերացիայից սոցիալիզմին անցնելը մանր արտադրութիւնից խոշորին անցնելն և, այսինքն մի անցում, վոր ավելի բարդ և, բայց վորը սրա վերաբերն ընդունակ և հաջողութիւն դեպքում բնակչութիւն ավելի լայն մասսաներ ընդգրկելու, ընդունակ և հին նախասոցիալիստական, նույնիսկ նախակապիտալիստական ու առաջին «նորութիւն» զիմադրելու տեսակետից ամենահամառ հարաբերութիւններին ավելի խոր ու ավելի կենսալի արտադրութիւնը քանդելու և հանելու: Կոնցեսիաների քաղաքականութիւնը հաջողութիւն դեպքում մեղ կտա սակավաթիվ ու մերի համեմատութիւնը որինակելի խոշոր ձեռնարկութիւններ, վորոնք կանդնած են ժամանակակից առաջավոր կապիտալիզմի մակարդակի վրա. միքանի տասնյակ տարիներից հետո այս ձեռնարկութիւններն ամբողջովին կանցնեն մեր ձեռքը: Կոոպերատիվ քաղաքականութիւնը հաջողութիւն դեպքում մեղ կտա այն, վոր մանր արտադրութիւնը կուժեզանա, և ամբողջ ժամանակում կամավոր միավորման օկըղբունքերով խոշոր արտադրութիւն անցնելը կհեշտանա:

Վերցնենք պետական կապիտալիզմի յերրորդ տեսակը: Պետութիւնը հրապուրում, դորձի յե քաշում կապիտալիստին իբրեւ առևտրականի, պետական արդյունքները վաճա-

ոելու և մանր արտադրողի արդյունքներ դնելու համար նրան վորոշ կոմիտիոն տոկոս վճարելով: Չորրորդ տեսակը պետու-  
թյունը ձեռնարկող կապիտալիստին կապալով և տալիս պե-  
տությանը պատկանող արտադրական հիմնարկը, հանքը կամ  
անտառամասը, հողամասը և այլն, վորի ժամանակ վարձա-  
կալական պայմանագրերն ամենից ավելի կոնցեսիոն պայմա-  
նագրի յե նման: Պետական կապիտալիզմի այս վերջին յեր-  
կու տեսակների մասին մեզանում բոլորովին չեն խոսում, ա-  
մենևին չեն մտածում, բոլորովին չեն նկատում սրանց: Բայց  
այս վո՛չ թե նրանից և առաջանում, վոր մենք ուժեղ ու խե-  
ղճ ենք յեղել, այլ նրանից, վոր թույլ ենք ու հիմար: Մենք  
վախենում ենք «ստոր ճշմարտության» յերկսին ուղղակի նա-  
յելուց և չափազանց շատ ենք անձնատուր լինում «մեղ վսե-  
մացնող խաբեյության» իշխանությանը: Մեղ շարունակ մո-  
լորեցնում և այն, վոր «մենք» կապիտալիզմից անցնում ենք  
սոցիալիզմին, մոռանալով ճիշտ կերպով, պարզ պատկերաց-  
նել, թե ուլքեր ենք «մենք»: Այս պարզ պատկերացումը չմո-  
ռանալու համար անհրաժեշտ և աչքի առաջ ունենալ մեր ե-  
կոնոմիկայի մեջ գոյություն ունեցող հասարակական տնտե-  
սության բոլոր—անպայման, առանց բացառության բոլոր—  
բաղմալան կառուցքների բաղադրիչ մասերի այն ցուցակը,  
վոր յես տվել եմ 1918 թ. մայիսի 5-ի հուլիսածումս\*):  
«Մենք», պրոլետարիատի առաջապահներս, առաջամարտիկ  
ընկալը, անմիջապես անցում ենք կատարում դեպի սոցիա-  
լիզմ, բայց առաջապահ ջոկատն ամբողջ պրոլետարիատի մի  
փոքրիկ մասն և, իսկ պրոլետարիատն իր հերթին բնակչու-  
թյան ամբողջ մասսայի մի փոքրիկ մասն և միայն: Յեւ վոր-  
պեսպի «մենք» կարողանանք մեր՝ սոցիալիզմին անմիջակա-  
նորեն անցնելու խնդիրը հաջողությամբ լուծել, սրա համար  
հարկավոր և ըմբռնել, թե նախակապիտալիստական հարա-  
բերություններից սոցիալիզմին անցնելու համար ինչ միջնոր-

դակամ ճանապարհներ, յեղանակներ, միջոցներ ու հնարներ  
են հարկավոր: Այս և դիտավորը:

Նայեցե՛ք ՌՍՖՍՀ քարտեզին: Վալդգայից հյուսիս,  
Դոնի Ռուստովից և Սարատովից հարավ—արևելք, Սրենբուր-  
գից ու Ումսկից հարավ, Տոմսկից\*) հյուսիս ընկած են ան-  
ծայրածիր տարածություններ, վորոնց վրա միջանի տա-  
նյակ կուլտուրական վիթխարի պետություններ կտեղավոր-  
վելին: Այս բոլոր տարածությունների վրա նահապետակա-  
նությունը, կիսավայրենությունն ու ամենախիսկական վայրե-  
նությունն և թաղավարում: Իսկ մնացած ամբողջ Ռուսաս-  
տանի գյուղացիական խուլ անկյուններո՞ւմ: Իսկ այն բոլոր  
վայրերո՞ւմ, վորտեղ գյուղերի միջև ընկած՝ ու տասնյակ  
վերստեր ձգվող ճանապարհադուրկ տարածությունները բա-  
ժանում են գյուղը յերկաթուղուց, այսինքն կուլտուրայի,  
կապիտալիզմի, խոշոր արդյունաբերության, մեծ քաղաքի  
հետ ունենալիք նյութական կապից: Միթե այս բոլոր վա-  
րերում չե՞ն իշխում նմանապես նահապետականությունը,  
աբլոմովչիկնան, կիսավայրենությունը:

Կարելի՞ յե արդյոք, յերևակայել, թե Ռուսաստանում  
տիրող այս դրությունից անմիջապես սոցիալիզմին անցնելը  
հնարավոր և իրականացնել: Այո՛, վորոշ չափով կարելի յե  
յերևակայել, բայց միայն մի պայմանով, վորի մասին այժմ  
մենք ճիշտ գիտենք շնորհիվ մի վիթխարի ու վախճանին  
հասցրած գիտական աշխատության: Այս պայմանը ելեկտրի-  
ֆիկացիան և: Յեթե մենք միջանի տասնյակ ուսյոնական ե-  
լեկտրոկայաններ չինենք (այժմ մենք գիտենք, թե վորտեղ և  
ինչպես կարելի յե ու պետք և չինել), յեթե այստեղերից ե-  
լեկտրական ուժն անցկացնենք ամեն գյուղ, յեթե բավակա-  
նաչափ ելեկտրոմոտորներ և այլ մեքենաներ ձարենք, այն  
ժամանակ նահապետականությունից սոցիալիզմին անցնելու  
համար միջին աստիճանների, միջակա ողակների կարիք չի

\*) Տես Յերկերի 22-րդ հատ. ուսու. հրատ. էջ 503—528, նմբ.:

\*) Բնագրում—«Յենիսեյսկից»: նմբ.:

լինի կամ համարյա թե չի լինի: Բայց մենք չափ չով դիտենք, վոր այս «մի» պայմանը միմիայն առաջին հերթի աշխատանքներին համար առնվաղն տասնյակ տարիներ ե պահանջում, իսկ այս ժամանակամիջոցի կրճատումն իր հերթին հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ պրոլետարական հեղափոխութիւնը հաղթանակի այնպիսի յերկրներում, ինչպէս են Անգլիան, Գերմանիան, Ամերիկան:

Մոտիկ տարիների համար պետք ե կարողանանք մտածել այն միջակ ողակների մասին, վորոնք կարող են նահապետականութիւնից, մանր արտադրութիւնից սոցիալիզմին անցնելը դուրացնել: «Մեզ» դեռ ելի հաճախ մոլորեցնում ե այն դատողութիւնը, թե «կապիտալիզմը չարիք ե, սոցիալիզմը՝ բարիք»: Բայց այս դատողութիւնը սխալ ե, վորովհետեւ մոռանում ե հոսարակական տնտեսական կառուցքների ամբողջ գումարը, կորզելով սրանց միջից միայն յերկուսը:

Կապիտալիզմը չարիք ե սոցիալիզմի համեմատութեամբ: Կապիտալիզմը բարիք ե միջնադարի համեմատութեամբ, մանր արտադրութեան հետ համեմատած, մանր արտադրողների փոշիացած վիճակից ծնունդ առնող բյուրոկրատիզմի համեմատութեամբ: Վորչափով մենք դեռ ուժ չունենք մանր արտադրութիւնից անմիջապէս սոցիալիզմին անցնելն իրականացնելու, այնչափով կապիտալիզմն անխուսափելի յե վորոչ չափով, իրրե մանր արտադրութեան ու փոխանակութեան տարերային արդիւնք, ե այնչափով պետք ե ողտադործենք կապիտալիզմը (առանձնապէս այն ուղղելով դեպր պետական կապիտալիզմի հունը), իրրե մանր արտադրութեան ու սոցիալիզմի միջև ընկնող միջակա ողակ, իրրե արտադրողական ուժերը բարձրացնելու միջոց, ճանապարհ, հնար, յեղանակ:

Վերջրե՛ք բյուրոկրատիզմի հարցը ե նայեցե՛ք նրան տնտեսական կողմից: 1918 թ. մայիսի 5-ին մեր տեղադատում բյուրոկրատիզմ չի յերևում: Հոկտեմբերյան հեղափո-

խութիւնից կես տարի օնց, այն ժամանակից հետո, յերբ վերիից մինչև ներքև խորտակել ենք հին բյուրոկրատական մեքենան, դեռ այս չարիքը չենք դղում:

Անցնում ե ելի մի տարի: Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան VIII համագումարում, 1919 թ. մարտի 18—23-ին, ընդունվում ե կուսակցութեան նոր ծրագիրը, ե մենք ուղղակի, առանց չարիքը խոստովանելուց վախենալու, այլ կամենալով այն բանալ, մերկացնել, նախատինքի սյուներին դամել, ցանկանալով չարիքի դեմ կռիւնը համար մտածմունք, կամք, յեռանդ, գործողութիւն առաջ բերել, այս ծրագրում խոսում ենք «խորհրդային իշխանութեան ներսում բյուրոկրատիզմի մասնակի վերածնութեան մասին»:

Անցավ ելի յերկու տարի: 1921 թ. դարնան, Խորհուրդների VIII համագումարից հետո, վոր (1920 թ. դեկտեմբեր) քննել ե բյուրոկրատիզմի հարցը, Ռ. Կ. Կ. X. համագումարից հետո, վոր (1921 թ. մարտին) բյուրոկրատիզմի վերլուծութեան հետ սերտ կապ ունեցող վեճերն եր ամփոփում, մենք այս չարիքն ել ավելի պարզ, ավելի վորոչ, մեր առաջ ավելի սպառնալին կանդնած ենք տեսնում: Վորո՞նք են բյուրոկրատիզմի տնտեսական արժատները: Այս արժատները գլխավորապէս յերկու տեսակ են. մի կողմից՝ դարդացած բուրժուազիան հատկապէս բանվորների (մասամբ նաեւ դուրդացիների) հեղափոխական շարժման դեմ կարիք ունի բյուրոկրատական, առաջին հերթին ղինվորական, ապա դատարանական ե այլ սպարատի: Մեղանում այս չկա: Մեր դատարանական ե այլ սպարատի: Մեղանում այս չկա: Մեր դատարանները դատարարային են, բուրժուազիայի դեմ ուղղված: Մեր բանակը դատարարային ե, բուրժուազիայի դեմ կանգնած: Բյուրոկրատիզմը բանակում չե, այլ նրան սպասարկող հիմնարկների մեջ: Մեղանում բյուրոկրատիզմը տնտեսական ուրիշ արժատ ունի՝ մանր արտադրողի ցիրուցան, փոշիացած վիճակը, նրա աղքատութիւնը, անկուտուրաւանութիւնը, ճանապարհներից դուրկ լինելը, անդրադիտու-

թյունը, հողագործության և արդյունաբերության միջև չլու-  
նելիք շրջանառության բացակայությունը, կապի և փոխադ-  
ղեցության բացակայությունը սրանց միջև: Հսկայական չա-  
փով քաղաքացիական պատերազմի հետևանք է այս: Յերբ  
մեզ բլոկադայի էյին յենթարկել, չընկալառել էյին ամեն  
կողմից, կտրել ամբողջ աշխարհից, հետո կտրել հացալիտ  
հարավից, Սիբիրից, քարածուխից, մենք չենք կարող ար-  
դյունաբերությունը վերականգնել: Մենք պարտավոր էյինք  
կանդ չառնելու «նաղմական կոմունիզմ» առաջ, չվախենա-  
լու ամենահուսահատական ծայրահեղությունից. կիսաքաղց  
ու կիսաքաղցից էյ ավելի մատթար դոյության կղիմանանք,  
բայց և կպաշտպանենք, ինչ գնով էլ լինի, չնայած անլուր  
քայքայմանն ու չընկալառության բացակայությանը կպաշտ-  
պանենք բանվորա-գյուղացիական իշխանությունը: Յեւ  
մենք թույլ չտվինք, փոր մեզ վախեցնեն, ինչպես վախեցրին  
ես-երներին ու մենչիկներին (փորոնք մեծ մասամբ սարսա-  
փից ու վախեցած լինելուց գնում էյին փառապանք բուրժուա-  
զիայի հետևից): Բայց այն, ինչ բլոկադայի յենթարկված  
յերկրում, պաշարված բերդում հաղթության պայման էր  
հանդիսանում, իր բացասական կողմը յերևան հանեց  
հենց ճիշտ 1921 թ. գարնանը, յերբ ՌՍՖՍՀ հողից վերջնա-  
կանապես հալածվեցին սպիտակ-գվարդիականների դորքե-  
րը: Պաշարված ամբողջ կարելի չէ և պետք է ամեն մի շրո-  
ջանառություն «փականքի տակ դնել». մասսաների հատուկ  
հերոսության ժամանակ այս կարելի չէ կրել յերեք տարի  
շարունակ: Այս բանից հետո մանր արտադրողի քայքայումն  
ավելի ուժեղացավ, խոշոր արդյունաբերության վերականգ-  
նումն ավելի ձգձգվեց, հետաձգվեց: Բյուրոկրատիզմն իբրև  
«պաշարման» ժառանգություն, իբրև մանր արտադրողի փո-  
շիացած ու ճնշված վիճակի վերնաշենք, լիովին յերևան յե-  
կավ:

Պետք է կտրողանանք չարիքն աներկյուղ խոստովանել,  
վորպեսզի ավելի հաստատուն կուլենք նրա դեմ, վորպեսզի

կրկին ու կրկին սկսենք սկզբից. դեռևս չատ անգամ մեզ  
հարկավոր է լինելու մեր շինարարության բոլոր ասպարեղ-  
ներում կրկին սկզբից սկսել, ուղղելով թերի թողածը, ընտ-  
րելով խնդրին մոտենալու զանազան ուղիներ: Պարզվել է,  
վոր խոշոր արդյունաբերության վերականգնումը հետաձգե-  
վում է. պարզվել է, վոր արդյունաբերության ու հողագոր-  
ծության «փականքի տակ դրած» չընկալառությունն անհան-  
դուրժելի յե այլևս. — այս նշանակում է, վոր պետք է ուժ-  
տալ ավելի մատչելիին, այն է՝ մանր արդյունաբերությունը  
վերականգնելուն: Գործին ոգնել այս կողմից, պատերազմի  
ու բլոկադայի հետևանքով կիսակործան չենք այս կողքին  
նեցուկ տալ: Ամեն կերպ, ինչ գնով ուզում է լինի, չընկա-  
ռությունը զարգացնել, առանց վախենալու կապիտալիզմից,  
վորովհետև սրա չընկալները բավական նեղ են, բավական  
«չափավոր» են մեզանում (եկոնոմիկայի մեջ կալվածատե-  
րերի ու կապիտալիստների եքսպրոպրիացիայի միջոցով, քա-  
ղաքականության մեջ բանվորա-գյուղացիական իշխանու-  
թյան միջոցով): Այս է պարենհարկի հիմնական միտքը, այ-  
ն և նրա տնտեսական նշանակությունը:

Կուսակցական ու խորհրդային բոլոր աշխատողները  
պետք է իրենց ամբողջ յեռանդը, ամբողջ ուշադրությունն  
ուղղեն այն բանին, վորպեսզի տեղերում — նահանգներում,  
ե՛լ ավելի՝ դավառներում, ե՛լ ավելի չատ՝ դավառակներում  
ու գյուղերում թեկուզ «փոքրիկ» միջոցներով, փոքր չափե-  
րով գյուղացիական տնտեսությունն անմիջապես վերականգ-  
նելու, չընկալեք մանր արդյունաբերության զարգացմամբ  
նրան ոգնելու տեսակետից կատարելիք տնտեսական շինա-  
րարության գործում մեծ նախաձեռնություն առաջ բերեն ու  
կյանքի կոչեն: Համապետական միասնական տնտեսական  
պլանը պահանջում է, վոր այս լինի ուշադրության ու հողա-  
ցողության կենտրոնը, «հարվածային» աշխատանքների կենտ-  
րոնը: Այս ասպարեզում ձեռք բերած վորոշ բարելավումն

ամենից ավելի յե մոտ ամենալայնածավալ ու ամենախոր  
«հիմքին», այս բարեկալումը հնարավոր կդարձնի ամենա-  
կարճ ժամանակամիջոցում դիմել ավելի յեռանդուն ու ավե-  
լի հաջող կերպով խոչոր արդյունաբերությունը վերականգ-  
նելուն:

Մինչև այժմ պարենաշխատողը մի հիմնական դերերկտիվ  
դերեր. հավաքի՛ր պարենամանատրման 100 %-ը: Այժմ  
դերերկտիվն այլ է. հավաքի՛ր ամենակարճ ժամանակամիջո-  
ցում հարկի 100 %-ը, այնուհետև հավաքի՛ր ելի 100 %, խո-  
չոր ու մանր արդյունաբերություն արդյունքների հետ փո-  
խանակելով: Ով հավաքի հարկի 75 %-ը ու 75 % էլ (յերկ-  
րորդ հարյուրյակից) խոչոր ու մանր արդյունաբերության  
արդյունքների հետ փոխանակելով, նա շատ ավելի ոգտա-  
վետ պետական դործ կկատարի, քան նա, վոր կհավաքի  
հարկի 100 %-ն ու 55 % էլ (յերկրորդ հարյուրյակից) փո-  
խանակությամբ: Պարենաշխատողի խնդրը բարդում է.  
մի կողմից Ֆիսկալ խնդիր է այս. հավաքի՛ր հարկը, վոր-  
քան կարելի յե արագ, վորքան կարելի յե ռացիոնալ յեղա-  
նակով: Մյուս կողմից՝ ընդհանուր տնտեսական խնդիր է  
այս. աշխատի՛ր այնպիսի ընթացք տալ կոոպերացիային,  
այնպես ողնել մանր արդյունաբերությանը, այնպես դար-  
գացնել նախաձեռնությունը, ձեռներեցությունը տեղերում,  
վորպեսզի մեծանա ու ամրապնդվի հողագործության ու ար-  
դյունաբերության շրջանառությունը: Մենք դեռևս շատ ու  
շատ վատ ենք կարողանում այս բանն անել. ապացույց՝  
բյուրոկրատիզմը: Մենք պետք է չվախենանք խոստովանե-  
լուց, վոր այստեղ շատ բան կարելի յե ու պետք է սովորել  
կապիտալիստից: Համեմատենք գործնական փորձի ար-  
դյունքներն ըստ նահանգների, ըստ գավառների, ըստ գավա-  
ռակների, ըստ գյուղերի. մի տեղ մասնավոր կապիտալիստ-  
ներն ու կապիտալիստիկները հասել են այս-ինչ արդյունքին:  
Նրանց չահույթը մոտավորապես այսքան է: Այս մի տուրք

է, մի վճար, վոր տվել ենք «դիտություն համար»: Դիտու-  
թյան համար վճարելն ախոսս է, միայն թե ուսումը կարդին  
ընթանա: Իսկ ահա հարկան տեղում կոոպերատիվ ճանա-  
պարհով հասել են այս-ինչ հետևանքին: Կոոպերատիվների  
չահույթն այսքան է: Իսկ յերրորդ տեղում գուտ պետական,  
գուտ կոմունիստական յեղանակով հասել ենք այս-ինչ ար-  
դյունքներին (ներկայումս այս յերրորդ դեպքը բացառու-  
թյուն կլինի):

Նպատակն այն պետք է լինի, վոր գործադիր կոմիտե-  
յին կից յուրաքանչյուր շրջանային տնտեսական կենտրոն,  
յուրաքանչյուր նահանգական տնտեսական խորհրդակցու-  
թյուն, իրեն առաջին հերթի դործ. անմիջապես վորոշեր  
խելույն կադմակերպել պարենահարկը վճարելուց հետո մնա-  
ցած ավելցուկների «ընդհանուրության» զանազան տեսակի  
փորձեր ու սխառմաներ: Միքանի ամիս հետո պետք է ձեռքի  
տակ ունենալ դործնական հետևանքներ՝ դրանք համեմատե-  
լու է ուսումնասիրելու համար: Տեղական կամ թե ներմուծ-  
վող աղ, կենտրոնից ստացած նավթ, փայտամշակման տնայ-  
նագործական արդյունաբերություն, տեղական հումք գոր-  
ծածող արհեստ, վոր տալիս է միքանի, թեկուզ վոչ շատ ըն-  
տիր, բայց դյուղացուն անհրաժեշտ ու ոգտակար արդյունք-  
ներ, «կանաչ ածուխ» (փոքրիկ նշանակություն ունեցող տե-  
ղական ջրային ուժերի ոգտագործումը երկտրիֆիկացիայի  
համար) և ալյն, և ալյն, այս բոլորը պետք է դնել գործը  
մեջ, ինչ գնով ուղղում է լինի, արդյունաբերության ու հո-  
ղագործության շրջանառությունը կենդանացնելու համար:  
Ով այս ստպարեղում ամենամեծ հետևանքների կհասնի,  
Ով այս ստպարեղում կապիտալիզմի միջոցով, թեկուզ  
նույնիսկ առանց կոոպերացիայի, առանց այս կապիտալիզ-  
մըն ուղղակի պետական կապիտալիզմով փոխարինելու, նա  
ավելի ոգուտ կտա համառուտական սոցիալիստական շինա-  
րարության գործին, քան նա, ով «կմտածի» կոմունիզմի

մաքրության մասին, ռեզլամենտներ, կանոններ, հրահանգներ կզրի պետական կապիտալիզմի ու կոոպերացիայի մասին, բայց գործնականում չընդանալով իր զործը տեղից չի շարժի:

Այս կարող է պարագրքս թվալ. մասնատիրական կապիտալիզմը սոցիալիզմին ոճանդակողի դերով:

Բայց այս ամենին պարագրքս չէ, այլ տնտեսական տեսակետից միանգամայն անհերքելի իրողություն: Մի անգամ՝ յերբ գոյություն ունի մանր-գյուղացիական յերկիր, վորի տրանսպորտն առանձնապես քաջայված է, վորը նոր է աղատվել պատերազմից ու բյուկադայից և վորը քաղաքականապես ղեկավարվում է պրոլետարիատի ձեռքով, իսկ սա, պրոլետարիատն, իր ձեռքում է պահում տրանսպորտն ու խոշոր արդյունաբերությունը, ապա այս նախադրյալներին միանգամայն անխուսափելի կերպով բղխում է մի բան, այն, վոր ներկա յոպեյում առաջնակարգ նշանակություն ունի նախ՝ տեղական չընդանալով յերկրորդ՝ մասնատիրական կապիտալիզմի միջոցով սոցիալիզմին աջակցություն ցույց տալու հնարավորությունը (չենք խոսում արդեն պետական կապիտալիզմի մասին):

Ավելի քիչ մի՞ճենք բառերի մասին: Այս կողմից մենք մինչև այժմ անչափ չափ ենք մեղանչել: Հարկավոր է ավելի բարձրացնել մտքներ գործնական փորձի մեջ և այս փորձն ավելի շատ ուսումնասիրել: Լինում են այնպիսի պայմաններ, յերբ նույնիսկ փոքրիկ մասշտաբով տեղական աշխատանքի որինակելի կադակերպումն ավելի կարևոր պետական նշանակություն ունի, քան կենտրոնական պետական իշխանության շատ ճյուղեր: Յեվ մեղանում ճիշտ ներկա յոպեյում, գյուղացիական տնտեսության վերաբերմամբ ընդհանրապես ու գյուղատնտեսական արտադրության ավելացուցնելն արդյունաբերության արդյունքների հետ փոխանակելու վերաբերմամբ մասնավորապես, պայմանները հենց այս.

պես են: Այս ուղղությամբ թեկուզ մի գաղափարի համար գործն որինակելիորեն կադակերպելն ավելի խոշոր համապետական նշանակություն ունի, քան այս կամ այն ժողովրդական կոմիսարիատի կենտրոնական ապարատի «որինակելի» բարելավումը: Վորովհետև մեղանում յերեք ու կես տարվա ընթացքում կենտրոնական ապարատն արդեն այնքան է բարդացել, վոր կարողացել է վորոչ վնասակար ծանրաչարժություն ստանալ. այս ապարատը չենք կարող զգալի և արագ կերպով բարելավել, չգիտենք, թե ինչպես պիտի անել այդ: Այս ապարատն արմատապես բարելավելու համար, թարմ ուժերի նոր հոսանք առաջացնելու համար, բյուրոկրատիզմի դեմ հաջողությամբ կռվելու համար, վնասակար ծանրաչարժությունը հաղթահարելու համար ողնությունը պետք է գա տեղերից, ցածրերից, փոքրիկ «ամբողջությունն» որինակելի կերպով կադակերպելուց, սակայն, ասում ենք, անպատճառ «ամբողջությունը», այսինքն վո՛չ թե մի տեղատեսությունը, տնտեսության մի ճյուղը, վո՛չ թե մի ձեռնարկությունը, այլ թեկուզ մի փոքրիկ տեղի բոլոր տնտեսական հարաբերությունների գումարը, ամբողջ տնտեսական չընդանալով յեր գումարը կադակերպելուց, սարքի դնելուց:

Երկանից նրանք, փորոնք դատապարտված են կենտրոնական աշխատանքի մեջ մնալու, կշարունակեն թեկուզ համետ, անմիջապես մոտոչելի չափով ապարատը բարելավել և բյուրոկրատիզմից այն մաքրել: Սակայն այս տեսակետից գլխավոր ողնությունը գալիս է ու կգա տեղերից: Մեզանում, վորքան յես կարողանում եմ դիտել, տեղերում գործն ընդհանրապես ավելի լավ դրություն մեջ է, քան կենտրոնում, և այս ել հասկանալի յես, վորովհետև բյուրոկրատիզմի չարիքը համակենտրոնանում է կենտրոնում: Մասկվան չի կարող այս տեսակետից Հանրապետության մեջ ամենափառ քաղաքն ու ընդհանրապես ամենափառ «տեղը» չլինել:

Տեղերում միջին հատկությունից դեպի յերկու կողմն ել շեղումներ կան. դեպի վատ կողմը շեղումներն ավելի հազվադեպ են, քան դեպի լավ կողմը շեղումները: Դեպի վատ կողմը շեղումներն այն չարարկություններն են, վոր կատարում են կոմունիստների պոչին կպած հին շինույնիկները, կարվածատերերը, բուրժուաներն ու այլ սրիկաները, վորոնք յերբեմն զոյվելի անարդանքներ, անկարգություններ ու այլանդակություններ են կատարում դյուղացիության վերարբամար: Այստեղ տեղորիստական դուռն է հարկավոր. տեղնուտեղը դատաստան և առանց այլեայլության զնդակահարություն: Թող Մարաովները, Չերնովներն ու սրանց նման անկուսակցական քաղքենիները ծեծեն իրենց կուրծքը և ազդադադեն. «Փառարանում եմ քեզ, տե՛ր, այն բանի համար, վոր յես «նրանց» նման չեմ, վոր չեմ ընդունել և չեմ ընդունում տեղորը»: Այդ հիմարները «տեղոր չեն ընդունում», վորովհետև բանվորներին ու դյուղացիներին հիմարացնելու հարցում նրանք սպիտակ-զվարդիականներին լակեյություն անող դործակիցների դեր են ընտրել իրենց համար: Ես-երաներն ու մենչեիկները «տեղոր չեն ընդունում», վորովհետև նրանք մասսաներին «սոցիալիզմի» դրոշի ներքո սպիտակ-զվարդիականների տեղորի տակ քաշելու դերն են կատարում: Այս ապացուցել և կերենչչինան ու կարնիլովչչինան Ռուսաստանում, կոլչակովչչինան Սիրիում, մենչևիկովչչը Վրաստանում, այս ապացուցել են Յերկիրորդ ու «Յերկուս ու կես» Խնտերնացիոնալների հերոսները Ֆինլանդիայում, Հունգարիայում, Ալստրիայում, Դերմանիայում, Իտալիայում, Անգլիայում և այլն: Թող սպիտակ-զվարդիական տեղորին լակեյություն անող դործակիցներն իրենց դովարանեն ամեն մի տեղոր չընդունելու համար: Իսկ մենք կչարունակենք սակ ծանր, բայց անկասկածելի ճշմարտությունը. այն յերկիրներում, վորոնք 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմից հետո անլուր ճգնաժամ են ապրում, վոր-

տեղ հին կապերը քայքայված են, և դասակարգային կոիլը սրված, — իսկ այս դրության մեջ են աշխարհի բոլոր յերկիրները, — այդ յերկիրներում, հակառակ կեղծավորների ու Ֆրալյորների ասածների, առանց տեղորի դործ անել չի կարելի: Կամ ամերիկական, անգլիական (Իրլանդիա), իտալական (Ֆաշիստներ), գերմանական, հունգարական ու այլ Ֆաստիկ սպիտակ-զվարդիական բուրժուական տեղոր, և կամ կարմիր-պրոլետարական տեղոր: Միջին ճանապարհ չկա, «յերկիրորդ» չկա և չի յեկ կարող լինել:

Դեպի լավ կողմը շեղած շեղումներն են՝ հաջողակ կոիլը բյուրոկրատիզմի դեմ, բանվորների ու դյուղացիների կարիքներին ամենամեծ ուշադրությամբ վերարկվելը, տընտեսությունը հողատարությամբ վտտելի կանգնեցնելը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, հողագործության ու արդյունաբերության տեղական չըջանառության զարգացումը: Դեպի լավ կողմը շեղած այս շեղումները թեև ավելի հաճախ են պատահում, քան դեպի վատ կողմը շեղած շեղումները, սակայն, այնուամենայնիվ, նրանք քիչ են պատահում: Սակայն նրանք կան: Քաղաքացիական պատերազմի ու զրկանքների մեջ կոիլված, նոր, յերիտասարդ կոմունիստական ուժեր պատրաստելու դործը տեղերում հաջողությամբ առաջ է դնում: Մենք դեռևս չատ ու չատ քիչ բան ենք անում այս ուժերը սխտեմատիկ ու անչեղ կերպով ցածրից վերև տեղաշարժելու համար: Այս կարելի յե և անհրաժեշտ է անել ավելի ընդարձակ չափերով ու ավելի համառությամբ: Մի քանի աշխատողների կարելի յե և պետք է պոկել կենտրոնական աշխատանքից և տեղական աշխատանքի դեղիկերը դադառների և գալառակների ղեկավարներ նրանք այստեղ ամբողջ անտեսական աշխատանքն ամբողջությամբ վերցրած Խրիմակելի կերպով կազմակերպելով՝ հակապական ոգուտ կտան և վորեև կենտրոնական ֆունկցիայից ավելի կարևոր համապետական դեր կկատարեն: Վորովհետև որի-

նակելի կերպով սարքի դրած գործը կլինի աշխատողների մի տնկարան ու նմանվելու մի որինակ, վորն ընդորինակելը համեմատաբար հեշտ կլինի, իսկ մենք կենտրոնից կկարողանանք նպաստել այն բանին, վոր որինակելի որինակն «ընդորինակելու գործն» ամեն տեղ լայն չափերով տարածվի ու պարտադիր դառնա:

Հողագործութեան ու արդյունաբերութեան միջև պարենահարկը վնասելուց հետո մնացած ավելցուկներն հաշվին և մանր, առավելագույնս սնանկագործական արդյունաբերութեան հաշվին կատարվող «չընկալուց» զարգացման համար պահանջվում և տեղերի՝ իր ելուցումը ինքնուրույն, բանիմաց, խելոք նախաձեռնություն, այս պատճառով ել դավառական ու դավաճանական աշխատանքի որինակելի դրվածքը ներկայումս համապետական տեսակետից միանգամայն բացառիկ կարևորություն և ստանում: Որինակ, գինվորական գործում վերջին լեհական պատերազմի ժամանակ մենք չվախեցանք, բյուրոկրատական յերարխիայից շեղվելուց, չվախեցանք «աստիճան ցածրացնելուց», չվախեցանք Հանրապետության Հեղափոխական Ռազմական Սորհրդի անդամներին (այս բարձր կենտրոնական պաշտոնում պահելով հանգերձ) ցածր պաշտոնի վոխադրելուց: Իսկ այժմ ինչու Համառուսական կենտր. Կործ. Կոմիտեյի անդամներին կամ ուրիշ կոլեկտիվների անդամներին կամ ուրիշ բարձրաստիճան ընկերների չվոխադրենք նույնիսկ դավաճային, նույնիսկ դավառական աշխատանքների: Մենք հո այնքան «բյուրոկրատական չենք վարձել» իրոք, վոր այսպիսի բաներից «քաշվենք»: Յեվ մեզանում սոսակյակ կենտրոնական գործիչներ կգտնվեն, վորոնք հոժարութեամբ ընդառաջ կդնան այս գործին: Իսկ ամբողջ հանրապետության տնտեսական շնարարութեան գործը չափազանց կհասվի սրանից, և որինակելի դավառականները կամ որինակելի դավառները վո՛չ միայն խոշոր, այլ ուղղակի վճռական, պատմական դեր կխաղան:

Իմիջի ալուց: Իբրև փոքրիկ, բայց, այնուամենայնիվ, նշանակություն ունեցող հանգամանք պետք է մատնանշել, վոր սպեկուլյացիայի դեմ կռվելու հարցը դնելիս անհրաժեշտ է սկզբունքային փոփոխություն յենթարկել այն: «Կանոնավոր» առևտուրը, վոր չի խուսափում պետական վերահսկողությունից, պետք է վայելի մեր ռեանդակությունը, մեզ ձեռնտու յե այն զարգացնել: Իսկ սպեկուլյացիան չի կարելի տարբերել «կանոնավոր» առևտրից, յեթե սպեկուլյացիան քաղաքատնտեսական տեսակետից հասկանանք: Առևտրի առևտուրը կապիտալիզմ է, կապիտալիզմն սպեկուլյացիա յե. այս բանի հանդեպ աչք փակելը ծիծաղելի յե:

Ի՞նչ անենք: Հայտարարենք, վոր սպեկուլյացիան անպատիժ մնա:

Վո՛չ: Հարկավոր է վերաքննել ու վերամշակել սպեկուլյացիային վերաբերող բոլոր որոնքները, պատժելի հայտարարել (իրապես առաջվանից յերեք անգամ ավելի խիստ հետաքննելով) ամեն մի հափշտակություն ու ամեն մի ուղղակի կամ անուղղակի, բացահայտ կամ քողարկված շեղում պետական վերահսկողությունից, հսկողությունից, հաշվառումից: Հարցը հենց այսպես դնելով (ժողովոսորհում արդեն սկսված է աշխատանք, այսինքն՝ Ժողովոսորհն արդեն հրահանգել է սպեկուլյացիային վերաբերող որոնքները վերաքննենք ու աշխատանքն սկսել) մենք կհասնենք այն բանին, վոր կապիտալիզմի անխուսափելի ու վորոշ չափով մեղ անհրաժեշտ զարգացումը կուղղենք դեպի պետական կապիտալիզմի հունը:

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ ՈՒ ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինձ մնում է շոշափել նաև, թեկուղ համառոտակի, քաղաքական այն դրությունը, ինչպես վոր կադմից ու փոփոխություն յենթարկվեց վերևում գծածն եկոնոմիկայի կապիտալիզմը:

Արդեն ասացի, վոր 1921 թ. մեր եկոնոմիկայի հիմնական մասերը նույնն էին, ինչ վոր կային 1918 թվին: 1921 թ. զարնան գլխավորապես անբերության և անասունների կոտորվելու շնորհիվ չափազանց վատթարացավ գյուղացիության դրությունը, վոր առանց այն ել պատերազմի աւրելադայի հետեանքով չափազանց ծանր եր: Այս վատթարանալու հետեանքը յեղան քաղաքական տատանումները, վորոնք, ընդհանրապես ասած, մանր արտադրողի իսկական «բնույթն» են կազմում: Այս տատանումների ամենացայտուն արտահայտությունը Կրոնշտադտի խռովությունն եր:

Կրոնշտադտի դեպքերի մեջ ամենից բնորոշը հենց այս մանր-բուրժուական տարրերի տատանումներն էին: Լիովին ձեռակերպված, պարզ, վորոշ բան շատ քիչ կա: «Աղատություն», «առևտրի աղատություն», «ճորտությունից աղատագրելու», «առանց լայլելիների խորհուրդներ» ունենալու կամ խորհուրդների վերընտրության, կամ «կուսակցության գերատառերից» աղատվելու և այլն և այլն, ու որանց նման մշուշապատ լողունդներ: Թե՛ մենչեիկները և թե՛ եսերները հայտարարում են, վոր Կրոնշտադտի շարժումն «իրենցն» ե: Վիկտոր Չերնովը սուրհանդակ ե ուղարկում Կրեմլնադտ, այս սուրհանդակի առաջարկով մենչեիկ Վարկը, Կրոնշտադտի պարագլուխներից մեկը, Կրոնշտադտում քվեարկում ե Սահմանադիր ժողովի ոգտին: Ամբողջ սպիտակ-գվարդիականությունը բոսնյայպես զորահավաքի յե յենթարկվում «Կրեմլնադտի համար», կարելի յե ասել, ուղիտ-հեռադրական արագությունը: Կրոնշտադտի սպիտակ-գվարդիական ղինվորական մասնադետներ ու մի շարք մասնադետներ, և վոչ թե միայն Կապլովսկին, ծովով Որանինբաում դեսանտ հանելու ծրագիր են մշակում, մի ծրագիր, վոր ես-երական-մենչեիկական տատանվող անկուսակցական մասնային վախեցնում ե: Արտասահմանի 50-ից ավելի ռուսական սպիտակ-գվարդիական լրագրեր կատաղի յեռանդով

պայքար են մղում «Կրեմլնադտի համար»: Խոշոր բանկերը, Ֆինանսական կապիտալի բոլոր դոկերը հանդանակություն են սկսում Կրոնշտադտին ողնելու համար: Բուրժուազիայի և կալվածատերերի խելքը պարագլուխը, կադետ Միլյուկովը, տխմար Վիկտոր Չերնովին ուղղակի (իսկ Պիտերի բանտում նստած մենչեիկ Դանին և մենչեիկ Ռաֆկովին կողմնակիկերպով) բացատրում ե, վոր Սահմանադիր ժողովի նշանաբանով չտալելու վո՛չ մի կարիք չկա, վոր կալիելի յե և պետի ե արտահայտվել Խորհրդային իշխանության ոգտին. միայն քե՛ս առանց բայլելիկների:

Իհարկե, դժվար բան չե ավելի խելքը լինել այնպիսի ինքնասիրահար տխմարներից, վորպիսին Չերնովն ե, մանր-բուրժուական Փրադի հերոսը, և կամ վորպիսին Մարտովն ե, «մարքսիզմի» կեղծ նմանություն ունեցող քաղքենիական ռեֆորմիզմի ասպետը: Իսկապես բանն այն չե, վոր Միլյուկովը իբրեւ անհատ ավելի խելք ե, այլ այն, վոր իր դասակարգային դրության շնորհիվ խոշոր բուրժուազիայի կուսակցական սլարագլուխն ավելի պարզ ե տեսնում, ավելի լաո ե հասկանում գործի դասակարգային եյությունը, քան մանր-բուրժուազիայի սլարագլուխները, Չերնովներն ու Մարտովները: Վորովհետեւ բուրժուազիան իրոք մի դասակարգային ուժ ե, վոր կապիտալիզմի ժամանակ անխուսափելի կերպով իշխում ե թե՛ միապետության մեջ ու թե՛ աշխարհի յերեսին յեղած ամենադեմոկրատական հանրապետության մեջ, նույնպես անխուսափելի կերպով ոգտվելով համաշխարհային բուրժուազիայի ոժանդակությունից: Իսկ մանր-բուրժուազիան, այսինքն՝ Յերկորդ ու «Յերկուս ու կեա» ինտերնացիոնալների բոլոր հերոսները, գործի տնտեսական եյության շնորհիվ ուրիշ բան չեն կարող լինել, քան դասակարգային անդրություն արտահայտություններ. — այստեղից են ծագում տատանումները, Փրադը, անճարակությունը: 1789 թ. մանր բուրժուաները դեռ կարող էին մեծ հե-

դափնակահան լինել, 1848 թվին նրանք ծիծաղելի ու վոդո-  
մեյի էյին, 1917—1921 թվերին նրանք իրենց իսկական դե-  
քով ուսակցիայի զգվելի գործակիցներն են, ուղղակի նրա  
յակեյները, Չերնովներ են կոչվում նրանք, թե Կաուցկիներ,  
Մակդոնարդներ և այլն, այս միևնույն է:

Յերբ բերլինում հրատարակվող իր հանդեսում Մարտովը  
հայտարարում է, վոր իբր թե Կրոնշտադտը վո'չ միայն մեն-  
չիկներ լողուղներն էր կիրառում, այլև ապացուցեց, թե  
հնարավոր է հակաբալլիստիկյան մի շարժում, վոր ամբողջո-  
վին չի ծառայում սպիտակ-դվարդիականությանը, ապա ինք-  
նասիրահար քաղքենիական Նարցիսի պատկերն է հենց  
այս: Յեկե'ք նարդապես չտեսնելու տանք այն իրողությունը,  
վոր իսկապես սպիտակ-դվարդիականները վողջունում էյին  
կրոնշտադտցիներին և Կրոնշտադտին ողնելու համար բան-  
կերի միջոցով ֆոնդեր էյին հավաքում: Միլյուկովին արդա-  
բացի յե Չերնովներին ու Մարտովներին հանդես, վորովհետե  
իսկապես սպիտակ-դվարդիական ուժի, կապիտալիստներն ու  
կալվածատերերն ուժի իսկապես տախտիկան է տալիս, յե-  
կեք ոժանդակենք, ումն ուղում է լինել, նույնիսկ անարխիստ-  
ներին, ինչպիսի Սորհրդային իշխանությունն ուղում է լինել,  
միայն քե տապալենք բալլիկներին, միայն քե իրականաց-  
նենք իշխանության տեղաշարժը: Բոլորովին միևնույն է՝  
դեպի աջ, թե դեպի ձախ, մենչեիկներին կողմը, թե անար-  
խիստներին, միայն թե իշխանությունը տեղաշարժենք բալլ-  
չիկներից դենը. իսկ մնացածը.—մնացածը «մենք», Միլյու-  
կովներս, «մենք», կապիտալիստներս ու կալվածատերերս  
«ինքներս» կանենք, անարխիստիկներին, Չերնովներին, Մար-  
տովներին թաթալոյներ տալով կքչենք, ինչպես Միրիբում ա-  
րինք Չերնովներին ու Մայսկիներին վերաբերմամբ, ինչպես  
Հունգարիայում արինք հունգարական Չերնովներին ու Մար-  
տովներին վերաբերմամբ, ինչպես Գերմանիայում արինք Կա-

ուցկու վերաբերմամբ, ինչպես Վիեննայում արինք Ֆր. Ադ-  
լերներին ու Ընկ. վերաբերմամբ: Բոլոր յերկիրներում, բոլոր  
հեղափոխությունների ժամանակ իսկական, գործարար  
բուրժուազիան տասնյակ անգամներ այս քաղքենիական Նար-  
ցիսներին, — մենչեիկներին, ես-երներին, անկուսակցական-  
ներին—հարցունելով է հիմարացրել ու վաճել: Այս ստուգ-  
ված է փաստելով: Նարցիսները շատախոսություն կանեն: Մի-  
ված է փաստելով: Նարցիսները շատախոսություն կանեն: Մի-  
լյուկովներն ու սպիտակ-դվարդիականները գործ կկատարեն:

Միայն թե իշխանությունը բալլիկներից դենը տեղա-  
շարժվի, բոլորովին միևնույն է, միբե'չ դեպի աջ, թե դեպի  
ձախ. իսկ մնացածը կարգի կընկնի: Այս հարցում Միլյու-  
կովը միանգամայն իրավացի յե: Այս մի դասակարգային  
ձգձարություն է, վորը միջնադարից հետո նոր պատմու-  
թյան բազմադարյան ժամանակաշրջանի բոլոր յերկիրների  
հեղափոխությունների ամբողջ պատմությունն է հաստատել:  
Փոշիացած վիճակում գտնվող մանր արտադրողին, գյուղա-  
ցուն կամ բուրժուազիան է միացնում տնտեսապես ու քաղա-  
քային կամ բուրժուազիան է միացնում, բոլոր յերկիրներում,  
քաղաքային (կապիտալիզմի ժամանակ, բոլոր յերկիրներում,  
նոր դարերի բոլոր հեղափոխությունների ընթացքում այս-  
պես է յեղել միշտ. կապիտալիզմի ժամանակ հենց միշտ ել  
այսպես կլինի) և կամ պրոլետարիատը (այսպես է յեղել սաղմ-  
նային կերպարանքով ամենակարճ ժամանակամիջոցում նոր  
դարերի ամենամեծ հեղափոխություններից մի քանիսի ամե-  
նարարձր դարգացման ընթացքին, այսպես յեղավ 1917—1921  
թվերին մուսսոլինիստական՝ զարգացած կերպարանքով): «Յեր-  
բորդ» ճանապարհի մասին, «յերբորդ ուժի» մասին շարա-  
կրատել ու յերազել կարող են ինքնուսիրահար Նարցիսները  
միայն:

Մեծագույն դժվարությամբ, կատարել կովի մեջ բալլ-  
չիկները պատրաստեցին պրոլետարիատին կառավարելու  
ընդունակ մի ալանդարդ, ստեղծեցին ու պահեցին, պաշտ-

պանեցին պրոկտարիատի դիկտատուրան, և չորս տարվա զործնական կյանքից հետո, փորձով ստուգելուց հետո, Ռուսաստանում դասակարգային ուժերի հարաբերակցությունը պարզից ել պարզ դարձավ: Միակ հեղափոխական դասակարգի պողպատյա ու կոփված մի ավանդարդ, մի մանր-բուրժուական տատանվող տարերք և համաշխարհային բուրժուազիայի ոժանդակությունը վայելող ու արտասահմանում տափ կացած Միլյուեկովներ, կապիտալիստներ, կալվածատերեր: Հարցը պարզից ել պարզ է: «Խխանություն վորեն «տեղաշարժ» միայն վերջիններ կողապողծեն և կարող են սղտադարձել:

1918 թ. վերահիշյալ բրոշյուրում այս մասին ուղղակի ասել ենք. «Գլխավոր թշնամին»—«մանր-բուրժուական տարերքն է»: «Կամ մենք նրան մեր վերահսկողությունն ու հաշվառմանը կենթարկենք, և կամ նա անխուսափելի ու անսրբոն կերպով մեր բանվորական իշխանությունը կտապալի, քնչոքս տապալեցին հեղափոխությունը Նապոլեոններն ու Կալվինյակները, վորոնք աճել ու զորացել էին հենց այս մանր-բուրժուական հողի վրա: Այսպես և դրված հարցը: Միայն այսպես և դրված հարցը» (1918 թ. մայիսի 5-ի բրոշյուրից. հմմտ. վերևը)\*):

Մեր ուժը դոյություն ունեցող թե՛ ուսական ու թե՛ միջադպյան բոլոր դասակարգային մեծությունները պարզ ու պարզ հաշվառման յենթարկելն և և հետո յեւ սրանից բխող յերկաթյա յեռանդը, ամբողջությունը, կովի վճռականությունն ու անձնուրացությունը: Թշնամիներ շատ ունենք, բայց նրանք բաժան-բաժան են կամ չգիտեն, թե ինչ են ուղում (ինչպես բոլոր մանր-բուրժուաները, բոլոր Մարտովներն ու Չերնովները, բոլոր ակուսակցականներն ու անիշխանականները): Թե՛ մենք միացած ենք իրար հետ անմիջաբար, բոլոր յեր-

կիրների պրոկտարների հետ անուղղակի կերպով. մենք դիտենք, թե ինչ ենք ուղում: Յեւ այս պատճառով ել մենք անպարտելի յենք համաշխարհային մասշտաբով, թե՛ և այս աժենեկն չի բացասում այս կամ այն ժամանակի ընթացքում առանձին պրոկտարական հեղափոխությունների պարտություն հնարավորությունը:

Իդուր չե, վոր մանր-բուրժուական տարերքը տարերք և կոչվում, վորովհետեւ այս ամենից ավելի անձե, անորոշ, անդիտակից մի բան է իրոք: Մանր բուրժուազիայի Նարցիսները կարծում են, վոր «ընդհանուր քվեարկությունը» կապիտալիստների ժամանակ վոչնչացնում է մանր արտադրողի բնույթը, մինչդեռ իրոք այս քվեարկությունն ոգևում է բուրժուազիային յեկեղեցու, մամուլի, ուսուցչության, վոստիկանուղիային յեկեղեցու, մամուլի, ուսուցչության, վոստիկանուղիային, հազար տեսակ տնտեսական ճրնջթյան, ղինվորականության, հազար տեսակ տնտեսական ճրնջթյան, ղինվորականության, հազար տեսակ տնտեսական ճրնջթյան միջոցով, ոչնչում է բուրժուազիային՝ վոչնչացած մանր արտադրողներին յեկեղեցու յերեն: Քայքայումը, կարիքն ու դրություն ծանրությունը տատանումներ են տուջ բերում այսուր բուրժուազիայի, վաղը պրոկտարիատի կողմը: Միմիայն պրոկտարիատի կոփված ավանդարդն է ընդունակ տատանումներին չենթարկվելու և տատանումներին դեմ կանդնելու:

1921 թ. դարնան դեպքերը կրկին ու կրկին անգամ ցույց տվին ես-երկրի ու մենչեիկների դերը. նրանք ոգնում են տատանվող մանր-բուրժուական տարերքին՝ բայչեիկներից ընկրկելու, «իշխանություն տեղաշարժ կատարելու» հաշուադարձ կապիտալիստների ու կալվածատերերի: Մենչեիկներն ու ես-երկրի այժմ սովորել են «անկուսակցականներին» գույնը ընդունել: Այս ապացուցված է լիովին: Յեւ միայն տխմարները կարող են այս չտեսել, չհասկանալ, վոր մենք չենք կարող թույլ տալ, վոր մեղ հիմարացնեն: Անկուսակցական կոնֆերենցիաները կուռքեր չեն: Նրանք դնահատելի յեն, յեթե հնարավորություն են տալիս մոտենալու այն մասսային, վո-

\*) Տես այս գրքուկը, ել 8 և Յերկերի 22-րդ հատ., ել 515 հատ. հրատ. Խմբ.

բին վո'չ մի ձեռք չի կպել, միլիոնավոր աշխատավորներին այն շերտերին, վորոնք քաղաքականությունից դուրս են կանգնած. սակայն նրանք—անկուսակցական կոնֆերենցիաները—վնասակար են, յեթե «անկուսակցականների» գույնով ներկված ես-երներին ու մենչեիկներին առարկեղ են տալիս Սյուպիսի մարդիկ նպաստում են խռովություններին, ոգնում են սպիտակ-գլխարդիականությանը: Թե՛ բացահայտ ու թե՛ անկուսակցականի գույնով ծպտված ես-երներին ու մենչեիկներին տեղը բանտն է (կամ արտասահմանյան գերական հանդեսները, սպիտակ-գլխարդիականների կողքին. Մարտովին հոգաբարձի թողինք արտասահման), բայց վոչ թե անկուսակցական կոնֆերենցիաները: Մասնաների արամադրությունն ստուգելու, մերձենալու ուրիշ ճանապարհներ կարելի չեն և պետք է դառնել: Թող դնա արտասահման, ով ուզում է՝ պարլամենտարիզմ, Սահմանադիր ժողով, անկուսակցական կոնֆերենցիա խաղալ. գնացե՛ք աշտեղ, Մարտովի մոտ, համեցե՛ք ինդերեմ, փորձեցե՛ք «դեմոկրատիայի գրավչությունը», Վրանդելի զինվորներից հարց ու փորձ արե՛ք դեմոկրատիայի այս գրավչության մասին, շնորհ արե՛ք: Իսկ մենք ժամանակ չունենք տեսնելու, թե ինչպես են կոնֆերանցիաներում «սպողիցիա» խաղում: Մենք չընկալում ենք համաշխարհային բուրժուազիայի կողմից, վոր հսկում է և սպասում տասնամյակների յուրաքանչյուր բուրժուազիայի, վորպեսզի հետ դարձնի «յուրայիններին», վորպեսզի վերականգնի կալվածատերերին ու բուրժուաներին: Մենք կչարունակենք բանտում պահել ես-երներին ու մենչեիկներին, բացահայտ լինեն նրանք, թե «անկուսակցական» գույնով ներկված:

Ե՛նք բոլոր միջոցներով ավելի սերտ կապեր կհաստատենք աշխատավորների այն մասսայի հետ, վորին չի չոչափել քաղաքականությունը, բացի այն միջոցներից, վորոնք լուրջ առարկեղ են տալիս մենչեիկներին ու սոցիալիստ-հեղափոխականներին, ազատ առարկեղ են տալիս այն տատա-

ճումներին, վորոնք նպաստում են Միլյուկովին: Մենք առանձին յետանդով դեպի խորհրդային աշխատանք կմղենք հարյուրավոր ու հարյուրավոր անկուսակցականներին, իսկական անկուսակցականների, վորոնք մասսայից, շարքային բանվորներից ու դուռնացիներից են դուրս յեկել, և վո'չ թե նրանց, վորոնք «անկուսակցական գույնով են ներկվել», վորպեսզի մենչեիկական ու ես-երական սերտած նակաղներ կարդան, վորոնք Միլյուկովին են ձեռնտու: Մեզանում հարյուրավոր ու հազարավոր անկուսակցականներ են աշխատում, վորոնցից տասնյակներն ամենակարևոր ու պատասխանատու պաշտոններում: Պետք է սրանց աշխատանքն է՛լ ավելի ստուգել: Պետք է նոր ստուգման համար ավելի շատ առարկեղ քաշել հազարավոր ու հազարավոր շարքային աշխատողների, վորոնք սրանց, սխտեմատիկ ու անչեղ կերպով, հարյուրավորներով շարժել նրանց դեպի բարձր պաշտոնները՝ փորձով ստուգելու հիման վրա:

Մեզանում կոմունիստները մինչև այժմ լավ չեն կարողանում հասկանալ կառավարելու իրենց իսկական խնդիրը. նրանք պետք է վո'չ թե աշխատեն՝ «ամեն բան իրենք» կատարեն, ուժից ընկնելով ու գործը չհասցնելով, 20 դործ հանձն առնելով ու վոչ մեկը չվերջացնելով, այլ ստուգեն տասնյակ ու հարյուրավոր ուղեկանների աշխատանքը, գործն այնպես կարգավորեն, վոր ներքևից, այսինքն՝ իսկական մասսան ստուգի սրանց կատարած աշխատանքները. կոմունիստները պետք է ուղղություն տան աշխատանքին և սովորեն այն մարդ-պետք է ուղղություն ունեն (մասնադետներ) ու խոհանցից, վորոնք գիտություն ունեն (մասնադետներ) ու խոշոր տնտեսությունը կարգի բերելու փորձ (կապիտալիստներ): Խելոք կոմունիստը չի վախենա ռադմասնադետից բան սովորել, թեև ռադմասնադետների<sup>9/10</sup>-ն ընդունակ է ամեն մի դեպքում դավաճանելու: Խելոք կոմունիստը չի վախենա կապիտալիստից բան սովորելուց (արդյոք այս կապիտալիստը խոշոր կոմիսիոներ-կապիտալիստ կլինի, թե առևտրական.

կոմիտիոններ, թե մանր կապիտալիստիկ-կոոպերատոր և այլն, այս միեւնոյն է), թեև կապիտալիստը ռազմամասնազետից աւելի լավ չէ: Սովորեցինք Կարմիր բանակում բռնել դավաճան ռազմամասնազետներին, ջոկել աղնիկներին ու բարեխիղճներին, ընդհանրապես ու ամբողջութեամբ վերցրած՝ ողտադործել հաղարարը ու տասնյակ հաղարարը՝ ռազմամասնազետներին: Սովորում ենք նույնն անել (յուրահատուկ յեղանակով) ճարտարազետներին և ուսուցիչներին վերաբերմամբ, թեև այս անում ենք շատ ավելի վատ, քան Կարմիր բանակում (այնտեղ Դենիկինն ու Կոլչակը մեզ լավ էլին շտապեցնում, հարկադրում էլին ավելի արագ, ավելի յեռանդով ու ավելի կարգին սովորելու): Սովորենք կատարել նույնը (դարձյալ յուրահատուկ ձևով) կոմիտիոններ-առևտրականի վերաբերմամբ, պետութեան համար գնումներ կատարողներին վերաբերմամբ, կոոպերատոր-կապիտալիստիկներին վերաբերմամբ, կոնցեսիոններ-ձեռնարկողներին վերաբերմամբ:

Բանվոր ու գյուղացի մասսային հարկավոր է իր վիճակի անմիջական բարելավումը: Նոր ուժերն ոգտակար աշխատանքի դնելով, մենք կհասնենք այս նպատակին: Պարենհարկն ու նրա հետ կապված մի շարք միջոցները կողենն այս բանին: Սրանով մենք մանր արտադրողների անխուսափելի տատանումների տնտեսական արմատը տակից կկտրենք: Իսկ Միլլոկովի համար նպաստավոր քաղաքական տատանումների դեմ կկռվենք անխնա: Տատանվողները շատ են: Մենք քիչ ենք: Տատանվողները բաժան-բաժան են: Մենք միացած ենք: Տատանվողները տնտեսապես ինքնուրույն չեն: Պրոլետարիատը տնտեսապես ինքնուրույն է: Տատանվողները չդիտեն՝ ինչ են ուզում. թե՛ ուզում են, թե՛ քաջվում, մեկ էլ՝ Միլլոկովը չի հրամայում: Իսկ մենք դիտենք՝ ինչ ենք ուզում:

Յեւ այսպատճառով ել մենք կհաղթենք:

Ամփոփենք:

Պարենհարկը մի անցում է ռազմական կոմունիզմից դեպի ուղիղ սոցիալիստական արդյունաբերականացում:

Ծայրահեղ քաջացումը, վոր ավելի արվեց 1920 թվի անբերութեան հետեանքով, անհետաձգելիորեն անհրաժեշտ դարձրեց այս անցումը, վորովհետև պարզվեց, վոր խոշոր արդյունաբերութեան արագ վերականգնումն անհնարին է:

Այստեղից բխում է, առաջին հերթին, դյուղացու դրությունը բարելավել: Սրա միջոցը պարենհարկն է, հողագործութեան ու արդյունաբերութեան միջև չըջանալու զարգացումը, մանր արդյունաբերութեան զարգացումը:

Երջանառութեանն առևտրի ազատութեան է, կապիտալիզմ է: Այս մեզ ողտակար է այն չափով, վոր չափով կողնի կռվելու մանր արտադրողի փոշիացած վիճակի ու վորոշ չափով ել նաև բյուրակրատիզմի դեմ: Չափը կասմանի գործնական կյանքը, փորձը: Պրոլետարական իշխանութեան համար այստեղ վոչինչ չկա սարսափելի, քանի ղեռ պրոլետարիատն իր ձեռքում ամուր բռնած է պահում իշխանութեանը, իր ձեռքում ամուր պահում է տրանսպորտն ու խոշոր արդյունաբերութեանը:

Սակեւոլյացիայի դեմ մղած կռիվը պետք է վերածել մի կռվի, վոր մղվում է հափշտակութեանների դեմ, ու պետական հսկումից, հաշվումից ու վերահսկողութեանից խուսափող շեղումների դեմ: Այսպիսի վերահսկողութեան միջոցով մենք վորոշ չափով անխուսափելի ու մեզ անհրաժեշտ կապիտալիզմն ուղղում ենք դեպի պետական կապիտալիզմի հունը:

Հողագործութեան ու արդյունաբերութեան միջև չըջանալու զարկ տալու գործում տեղերի նախաձեռնութեան, ձեռներեցութեան, ինքնուրույնութեան բաղմակողմանի, ամեն կերպ զարգացումը, ինչ գնով ել լինի: Գործնական փորձի ուսումնասիրութեան այս տեսակետից, այս փորձի ըստ կարելույն շատ բաղմազանութեան:

Ոգնութիւն մանր արդյունաբերութեանը, վոր ծառայում է դրողացիական հողագործութեանը և սփանդակում է նրա վրտքի կանգնելուն: Ոգնութիւն նրան մինչև վորոշ աստիճան՝ պետական հումք մատակարարելով: Ամենամեծ հանցանքը հումքն անմշակ թողնելն է:

Չվախենանք այն «ուսումից», վոր կոմունիստները պիտի ստանան բուրժուական մասնագետներից, վորոնց թվում նաև թե՛ տուտորականներից, թե՛ կոոպերատոր-կապիտալիստիկներից ու թե՛ կապիտալիստներից: Սրանցից սովորելը ձևով է տարբեր, իսկ ըստ գործի ելութեան նույնն է, ինչ սովորում ու ձեռք ելինք բերում ռազմամասնագետներից: «Գիտութեան» հետևանքները պետք է ստուգել գործնական փորձով. ավելի լավ արա՛, քան կողքիդ անում ելին բուրժուական մասնագետները. թե՛ այսպես և թե՛ այնպես կարողացի՛ր հասնել այն բանին, վոր վրտքի կանգնեցնես հողագործութեանը, դարի տաս արդյունաբերութեանը, հողագործութեան ու արգյունաբերութեան միջև կատարվող չըջանառութեան դարդացմանը: Ժլատութիւն մի՛ անի «գիտութեան համար» վճարելիս. գիտութեան համար վճարելն ախոս է, միայն թե ուսումը կարգին ընթանա:

Պետք է ամեն կերպ ոգնել աշխատավորների մասսային, մոտենալ նրան, նրա միջից հարյուրավոր ու հազարավոր աշխատողներ առաջ քաշել տնտեսական աշխատանքի լծելու համար, իսկ Կրոնշտադտի նմանութեամբ անկուսակցական նորաձևիկ զգեստ հագած մենչևիկներին ու ես-երներին պետք է զգուշութեամբ պահել բանտում կամ ուղարկել Բերլին, Մարտովի մոտ՝ զուտ դեմոկրատիայի ամեն գրավչութեաններն ոգտագործելու համար, Չերնովի, Միլյուկովի, վրացի մենչևիկների հետ մտքերի ազատ փոխանակութիւն կատարելու համար:

Գրված է 1921 թ. մարտ-ապրիլի:  
Առանձին գրուելով տպագրված է  
1921 թ. մայիսի:

Տպագրվում է Յերկերի ռուս.  
2-րդ երատ. տեխսից, հ. 26,  
էջ 317—352:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

|                                                      |    |
|------------------------------------------------------|----|
| Ներածութեան փոխարեն . . . . .                        | 52 |
| Ուսաստանի ժամանակակից եկոնոմիկայի մասին . . . . .    | 3  |
| Պարենհարկի մասին, առևտրի աղատութեան մասին, . . . . . | 4  |
| Կանցեսարների մասին . . . . .                         | 20 |
| Գաղաքական ամփոփումներ ու լեզրակացութիւններ . . . . . | 47 |
| Յեղրափակում . . . . .                                | 57 |



Տեխնիկական խմբագիր՝ Մ. Նփրիկ  
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան  
Հանձնված է արտադրության 13 հունվարի 1933 թ.  
Ստորագրված է տպագրելու 16 հունվարի 1933 թ.  
Տիրած 5.000 112.000 տպ. նշ.  
Պետհրատի տպարան

Պատվեր № 3425 Հրատ 51 Գլավիտ № 7685 (բ)

ՀՀ Ազգային գրադարան



NL0180507

ԳԻՆԸ 50 Կ.

В. И. Ленин  
О продовольственном налоге

Издательство ЦККП(б)А  
Партиздат 1932 Эривань